

Նոր Կտակարանի պատմությունները





Նոր Կտակարանի պատմությունները

Տպագրված է
ՀԻՍՈՒՍ ԲՐԻՍՏՈՍԻ ՎԵՐՋԻՆ ՕՐԵՐԻ ՍՐԲԵՐԻ ԵԿԵՂԵՑՈՒ ԿՈՂՄԻՑ
Սույժ Լեյք Սիթի, Յուտա

Դիմացի կազմ. *Սուրբ Ծնունդ*, Փոլ Մանն: © IRI
Ետևի կազմ. *Մարիամը գերեզմանի մոտ*, Փոլ Մանն: © IRI

© 1980, 2005 by Intellectual Reserve, Inc.

Բոլոր իրավունքները պաշտպանված են:

Երկրորդ հրատարակություն

Փոփոխված 2008

Տպագրված է Ամերիկայի Միացյալ Նահանգներում

Անգլերենի հաստատումը. 6/08: Թարգմանության հաստատումը. 6/08:

New Testament Stories-ի թարգմանությունը:

Armenian 36618 201



Բովանդակություն

Գլուխ	Վերնագիր	Էջ
	Ներածություն. Մեր Երկնային Հոր Ծրագիրը	1
1	Եղիսաբեթը և Զաքարիան	6
2	Մարիամը և հրեշտակը	8
3	Ծնվում է Հովհաննես Մկրտիչը	10
4	Հովսեփը և հրեշտակը	12
5	Հիսուս Քրիստոսը ծնվեց	13
6	Տաճար տարվելը	16
7	Իմաստունները	18
8	Չար թագավոր Հերովդեսը	19
9	Պատանի Հիսուսը	21
10	Հիսուսը մկրտվում է	26
11	Հիսուսը փորձվում է	30
12	Հարսանիք Կանայում	32
13	Հիսուսը և Նրա Երկնային Հոր տունը	34
14	Նիկողոճմոս	36
15	Կինը ջրհորի մոտ	38
16	Ղեկավարի որդին	40
17	Զայրացած մարդիկ Նազարեթում	42
18	Հիսուսն ընտրում է Իր Առաքյալներին	44
19	Լեռան Քարոզը	48
20	Հիսուսը սովորեցնում է աղոթքի մասին	51
21	Հիսուսը սաստում է քամիներին և ալիքներին	53
22	Չար հոգիներով մարդը	54
23	Մարդ, որը չէր կարողանում քայլել	57
24	Հայրոսի դուստրը վերակենդանանում է	59
25	Կինը դիպչում է Հիսուսի զգեստին	62
26	Հիսուսը ներում է մի կնոջ	64
27	Կատարում էր Հոր աշխատանքը երկրի վրա	67
28	Հիսուսը կերակրում է 5000 մարդ	69
29	Հիսուսը քայլում է ջրի վրայով	71

30	Կյանքի հացը	73
31	Հիսուսը բուժում է խուլ մարդուն	75
32	Պետրոսը վկայում է Քրիստոսի մասին	76
33	Հայտնություն փառքի մեջ. Փոխակերպում	78
34	Չար հոգով տղան	80
35	Բարի Սամարացին	82
36	Հիսուսը պատմում է երեք առակ	85
	Կորած ոչխարը	86
	Կորած դրամը	88
	Անառակ որդին	90
37	Տաս բորոտները	95
38	Փարիսեցին և մաքսավորը	97
39	Հիսուսը բուժում է կույրին	100
40	Բարի հովիվը	102
41	Հիսուսը օրհնում է երեխաներին	104
42	Հարուստ երիտասարդը	105
43	Հիսուսը կենդանացնում է Ղազարոսին	107
44	Փրկիչը գնում է Երուսաղեմ	110
45	Այրի կնոջ լումաները	113
46	Երկրորդ Գալուստը	115
47	Տաս կույսերը	118
48	Տաղանդները	121
49	Առաջին Հաղորդությունը	124
50	Վերջին Ընթրիքի ժամանակ տրված այլ ուսմունքներ	127
51	Հիսուսը տանջվում է Գեթսեմանի Այգում	129
52	Հիսուսի դատը	133
53	Հիսուսը խաչվում է	136
54	Հիսուսը հարություն է առնում	139
55	Առաքյալները ղեկավարում են Եկեղեցին	145
56	Պետրոսը բուժում է մի մարդու	148
57	Ամբարիշտները սպանում են Ստեփանոսին	150
58	Սիմոնը և Քահանայությունը	152
59	Սավուղը սովորում է Հիսուսի մասին	154
60	Պետրոսը վերակենդանացնում է Տաբիթային	156
61	Պողոսը և Շիղան բանտում	158
62	Պողոսը հնազանդվում է Սուրբ Հոգուն	161
63	Պողոսը ավարտում է իր առաքելությունը	162

Նոր Կտակարանից հետո	167
Ծանոթություն բառերին	171
Ծանոթություն վայրերին	176
Ծանոթություն մարդկանց	179
Սուրբ Երկրի լուսանկարներ	180
Նոր Կտակարանի Ժամանակագիծ.	184

Աղբյուրներ

Այս գրքի տեղեկության մի մասը վերցված է ոչ սուրբ գրություններից: Այդ աղբյուրները նշված են ստորև:

Bible Dictionary in the Latter-day Saint edition of the King James Version of the Bible (1979)

Հակոբոսի Թուղթը Ե. Թավմից, *Հիսուս Բրիստոս*, 3-րդ հրատարակություն (1916)

Մարգարե Ջոզեֆ Սմիթի Ուամունքները sel. Joseph Fielding Smith (1976)

Ընթերցողին

Նոր Կտակարանի պատմությունները գրվել են հատուկ ձեզ համար: Այս պատմությունները վերցվել են մի սուրբ գրքից: Պատմությունները կարդալիս հիշեք, որ դրանք իրական մարդկանց մասին են, որոնք ապրել են շատ տարիներ առաջ:

Կրկին ու կրկին կարդացեք պատմությունները, մինչև որ լավ դրանք սովորեք: Կարող եք դրանք կարդալ նաև Աստվածաշնչից: Նկարների մեծ մասի ներքևում դուք կտեսնեք հղումներ, որոնք ձեզ կհուշեն, թե որտեղ գտնել տվյալ պատմությունը Աստվածաշնչի կամ այլ գրքերի մեջ: Խնդրեք ձեր հայրիկին, մայրիկին, ուսուցչին կամ ընկերոջը օգնել ձեզ գտնել պատմությունը սուրբ գրություններում:

Եթե չգիտեք բառի նշանակությունը, կարող եք գտնել այն այս գրքի վերջում «Ծանոթություն բառերին» բաժնում: Եթե ցանկանում եք իմանալ վայրի մասին, կարող եք այդ մասին կարդալ «Ծանոթություն վայրերին» բաժնում: Եթե չգիտեք, ում մասին է խոսքը, կարող եք նայել «Ծանոթություն մարդկանց» բաժնում: Այս գիրքը ունի նաև բաժին, ուր հավաքված են Սուրբ Երկրի վայրերի լուսանկարները և Նոր Կտակարանի ժամանակագիծը:

ԾՆՈՒՆԵՐԻՆ և ՈՍՈՒԳԻՆԵՐԻՆ

Այս գիրքը կարող է ձեզ օգնել ուսուցանել սուրբ գրությունները: Օգտագործեք «Ծանոթություն բառերին», «Ծանոթություն վայրերին» և «Ծանոթություն մարդկանց» բաժինները՝ օգնելու համար երեխաներին ճանաչանալ այս գրքի բառերի, մարդկանց և վայրերի հետ: Այս գրքի մեջ օգնության այլ նյութեր են հանդիսանում քարտեզները, լուսանկարները և ժամանակագիծը:

Ուսուցանելիս կիսվեք Աստվածաշնչի մասին ձեր վկայությամբ: Նրանց, ում սովորեցնում եք, խրախուսեք աղոթքով փնտրել իրենց սեփական վկայությունները սուրբ գրությունների և Փրկչի, Հիսուս Քրիստոսի, մասին: Նրանք, ում դուք ուսուցանում եք, ավելի լավ կհասկանան, եթե նրանց համար կարդաք իրենց սիրված պատմությունները Աստվածաշնչից:



Ն ե ր ա ծ ո թ յ ո Ւ Ն

Մեր Երկնային Հոր Ծրագիրը



Երկիր գալուց առաջ մենք ապրում էինք երկնքում Երկնային Հոր հետ: Մենք Նրա հոգևոր զավակներն ենք և ունենք հոգևոր մարմիններ: Մենք սիրում էինք Նրան, իսկ Նա սիրում էր մեզ:

Մարգարե Զոզեֆ Սմիթի ուսմունքները, 354



Երկնային Հայրը մեզ ուսուցանել է մեր մասին Իր ծրագիրը: Այն կոչվում է փրկության ծրագիր: Եթե մենք հետևենք Նրա ծրագրին, մենք կարող ենք դառնալ Երկնային Հոր նման: Ըստ ծրագրի, մենք պետք է

գայինք երկիր և մսից ու ոսկորից մարմին ունենայինք: Մենք պետք է փորձվեինք տեսնելու, թե արդյոք մենք կինազանդվեինք Աստծո պատվիրաններին:

Աբրահամ 3.24-25



Փրկության ծրագիրը մեզ ճանապարհ է տալիս, որի միջոցով նորից կարող ենք ապրել Երկնային Հոր հետ: Մենք պետք է պահեինք պատվիրանները: Բայց մենք նաև օգնության կարիք էինք զգալու: Հարկավոր էր, որ մենք ազատվեինք մեր մեղքերից և մենք հարություն

առած մարմիններ ստանայինք: Քանի որ մենք չէինք կարող ինքներս ազատվել մեր մեղքերից և հարություն տայինք մեր մարմիններին, մեզ պետք էր Փրկիչ, որը դա կաներ մեզ համար:


2 Նևիի 2.5–9



Երկնային Հայրը ընտրեց Հիսուս Քրիստոսին, որ նա լինի մեր Փրկիչը: Հիսուսը սիրում էր Երկնային Հորը: Հիսուսը նաև մեզ էր սիրում: Նա համաձայնվեց գալ երկիր և մեզ ցույց տալ ինչպես ապրել արդար: Նա

պետք է ճանապարհ ցույց տար, որ բոլորը փրկվեին: Նա համաձայնվեց տանջվել մեր մեղքերի համար: Նա նաև պետք է մահանար և հարություն առներ, որպեսզի մենք նույնպես հարություն առնեինք:

2 Նևիի 2.8–9; Մովսես 4.1–2



Սատանան նույնպես ցանկացավ լինել մեր փրկիչը: Բայց նա չէր սիրում Երկնային Հորը: Նա չէր սիրում մեզ: Նա ուզում էր փոխել Երկնային Հոր ծրագիրը, որպեսզի ունենար Երկնային Հոր գործությունը և փառքը:

Մովսես 4.1–2



Երկնային Հոր հոգևոր զավակներից ոմանք ընտրեցին հետևել Սատանային: Սա շատ տխրեցրեց Երկնային Հորը: Նա ստիպեց Սատանային և նրա հետևորդներին հեռանալ երկնքից: Սատանան դևն է: Նա և նրան հետևած հոգիները ուզում են, որ մենք մեղք գործենք:

Մովսես 4.3–4



Երկնային Հայրը Հիսուսին պատվիրեց, որ մեզ համար երկիր պատրաստի: Հիսուսը պատրաստեց: Նա ստեղծեց արևը, լուսինը և աստղերը: Նա երկրի վրա բույսեր և կենդանիներ դրեց: Այժմ մենք ունենք երկիր, որտեղ կարող էինք զալ և մսից ու արյունից մարմին ունենալ:

Եբրայեցիս Ա.2; Մոսիս 3.8; Աբրահամ 4



Շատ մարդիկ եկան ապրելու երկրի վրա: Նրանցից ոմանք ընտրեցին հետևել Աստծո պատվիրաններին, ոմանք՝ ոչ: Հին մարգարեները մարդկանց սովորեցնում էին Երկնային Հոր ծրագրի և Հիսուս Քրիստոսի մասին:

2 Նևիի 2.19–21; Հակոբ 7.10–11; Մովսես 5.13–15




Մարգարեները ասել են, որ Հիսուսի հայրը պետք է լիներ Երկնային Հայրը: Նրա մայրը պետք է լիներ Մարիամ անունով մի շատ բարի կին: Նա պետք է ծնվեր Բեթլեհեմում:

Եսայիա Է.14; Միքիա Ե.2; 1 Նևիի 11.18–21; Ալևս 7.10



Մարգարեները ասել են, որ շատ մարդիկ չեն հավատա, որ Հիսուսը Փրկիչն է: Նա մյուս մարդկանց նման տեսք էր ունենալու և հարուստ չէր լինելու: Շատ մարդիկ կատեին Նրան:

Եսայիա ԾԳ.2–3



Մարգարեները նաև ասել են Հովհաննես Մկրտչի մասին: Նա պետք է գար Հիսուսից առաջ՝ մարդկանց Նրա մասին պատմելու համար: Հովհաննեսը պետք է մկրտեր Հիսուսին:

Եսայիա Խ.3; Մատթեոս Գ.1–3; 1 Նևիի 10.7–10; 11.27



Մարգարեները ասել են, որ Հիսուսը բարի է լինելու և շատ հրաշքներ է գործելու: Մահանալուց առաջ Հիսուսը պետք է տանջվեր բոլոր մարդկանց մեղքերի համար, որպեսզի մարդիկ չտանջվեին, եթե ապաշխարեին:

Մոիս 3.5–8; Կարդապետություն և Ուխտեր 19.16–18




Շատ մարգարեներ գիտեին, որ Հիսուս Քրիստոսը, մեր Փրկիչը, պետք է խաչվեր: Նրան պետք է մեխեին փայտյա խաչի վրա և Նա պետք է Իր կյանքը տար մեզ համար:

Հովհաննես 9.14–15; Մոսիա 15.7–9



Երեք օրից Նա պետք է հարություն առներ: Նրա հոգին պետք է վերադառնարԻր մարմնի մեջ: Քանի որ Հիսուսը պետք է մահանար և հարություն առներ, մենք բոլորս նույնպես կարող ենք հարություն առնել:

Եսայիա ԻԵ.8; 1 Կորնթոսցի ԺԵ.22; 2 Նևեի 2.8; Ավնա 33.21–22



Նոր Կտակարանը ցույց է տալիս, որ մարգարեների խոսքերը ճշմարիտ են: Դա պատմություն է Հիսուս Քրիստոսի և Նրա Առաքյալների մասին: Նրանք ապրում էին Սուրբ Երկրում: Շատ մարդիկ, որ

ապրում էին այնտեղ, կոչվում էին Հրեաներ: Հռոմեացիները զավթել էին Սուրբ Երկիրը և կառավարում էին Հրեաներին:



Գ Լ Ո Ւ Խ 1

Գլուխ 1. Եղիսաբեթը և Զաքարիան



Զաքարիան և նրա կինը, Եղիսաբեթը, հրեա էին և ապրում էին Երուսաղեմի մոտ: Նրանք հնազանդ էին Աստծո պատվիրաններին: Շատ տարիներ նրանք աղոթում էին երեխա ունենալու համար: Նրանք արդեն ծեր էին, բայց երեխաներ չունեին:


Ղուկաս Ա.5-7, 13



Զաքարիան քահանա էր տաճարում: Մի օր նրան այցելեց Գաբրիել անուճուճ մի հրեշտակ: Գաբրիելն ասաց, որ Աստված կպատասխանի Զաքարիայի և


Եղիսաբեթի աղոթքներին: Նրանք պետք է երեխա ունենային: Գաբրիելն ասաց, որ երեխայի անունը պետք է Հովհաննես դնեն:

Ղուկաս Ա.8-13, 19



Գաբրիելն ասաց, որ Հովհաննեսը պետք է լիներ Աստծո արդար մարգարե: Նա մարդկանց պետք է սովորեցներ Հիսուս Քրիստոսի մասին:

Ղովկաս Ա. 15–17



Զաքարիան շիավատաց հրեշտակին: Եղիսաբեթը շատ ծեր էր, որպեսզի երեխա ունենար: Գաբրիելն ասաց, որ քանի որ Զաքարիան շիավատաց Աստծո

խոստմանը, նա չէր կարողանալու խոսել մինչև Հովհաննեսի ծնունդը:

Ղովկաս Ա. 18–20



Գ Լ Ո Ւ Խ 2

Մարիամը և հրեշտակը



Մարիամը և Հովսեփը Նազարեթում: Նրանք շատ լավ մարդիկ էին: Նրանք սիրում էին միմյանց և պատրաստվում էին ամուսնանալ:

Ղուկաս Ա.26–27



Մի օր Գաբրիել հրեշտակն այցելեց Մարիամին: Նա Մարիամին ասաց, որ Աստված կօրհնի նրան:

Ղուկաս Ա.26, 28–3



Գարրիելը Մարիամին ասաց, որ Մարիամը լինելու էր Աստծո Որդու մայրը: Նրա անունը պետք է լիներ

Հիսուս և Նա պետք է լիներ բոլոր արդար մարդկանց Թագավորը:

Ղուկաս Ա.31–33



Մարիամն ասաց, որ կինազանդվի Երկնային Հորը և կլինի Հիսուսի մայրը:

Ղուկաս Ա.34–35, 38; 1 Նևիի 11.18–21



Գ Լ Ո Ւ Խ 3

Ծնվում է Հովհաննես Մկրտիչը



Գարրիել հրեշտակը Մարիամին ասաց, որ Եղիսաբեթը նույնպես տղա էրեխա է ունենալու: Մարիամը և Եղիսաբեթը բարեկամներ էին:

Ղուկաս Ա.36–37



Մարիամը գնաց Եղիսաբեթի մոտ: Սուրբ Հոգին Եղիսաբեթին ասաց, որ Մարիամը լինելու է Հիսուս Քրիստոսի մայրը: Մարիամը և Եղիսաբեթը շնորհակալություն հայտնեցին Աստծուն իրենց


օրհնելու համար: Մարիամը մոտ երեք ամիս մնաց Եղիսաբեթի մոտ: Այնուհետև Մարիամը վերադարձավ տուն՝ Նազարեթ:

Ղուկաս Ա.39–56



Ծնվեց Եղիսաբեթի որդին: Նրա ընկերները և ընտանիքը երջանիկ էին: Նրանք մտածում էին, որ երեխան պետք է կրի հոր՝ Զաքարիայի անունը: Սակայն Եղիսաբեթն ասաց, որ նրա անունը պետք է լինի Հովհաննես: Բոլորը զարմացած էին:

Ղուկաս Ա.57-61



Մարդիկ հարցրեցին Զաքարիային, թե ինչ պետք է լիներ երեխայի անունը: Զաքարիան դեռ չէր կարողանում խոսել, և նա գրեց. «Նրա անունը Հովհաննես է»:

Ղուկաս Ա.62-63



Դրանից հետո Զաքարիան կարողացավ նորից խոսել: Նա լցված էր Սուրբ Հոգով: Նա ասաց մարդկանց, որ շուտով կծնվի Հիսուս Քրիստոսը և որ Հովհաննեսը կպատրաստի մարդկանց Նրա համար:

Ղուկաս Ա.64, 67-69, 76




Հովհաննեսը մեծացավ և դարձավ մեծ մարգարե: Նա մարդկանց սովորեցրեց Հիսուս Քրիստոսի մասին:

Ղուկաս Ա.67, 76-80




Գ Լ Ո Ւ Խ 4

Հովսեփը և հրեշտակը



Հովսեփը լավ և բարի մարդ էր: Նա և Մարիամը պետք է ամուսնանային: Երբ նա իմացավ, որ Մարիամը պետք է երեխա ունենա, չգիտեր, ինչ անել: Քանի որ երեխան իրենը չէր, նա մտածում էր, թե չպետք է ամուսնանար նրա հետ:

Մատթևոս Ա.18–19



Մի գիշեր հրեշտակը երազում հայտնվեց Հովսեփին և ասաց, որ Մարիամի երեխան Աստծո Որդին է: Հրեշտակը Հովսեփին ասաց ամուսնանալ Մարիամի հետ և անվանել նրա երեխային Հիսուս: Հիսուսը պետք է լիներ աշխարհի Փրկիչը:

Մատթևոս Ա.20–21



Հովսեփը հնազանդվեց հրեշտակին և ամուսնացավ Մարիամի հետ:

Մատթևոս Ա.24–25



Գ Լ Ո Ւ Խ 5

Հիսուս Քրիստոսը ծնվեց




Հռոմեական կայսրը օրենք հռչակեց, որով բոլորը պետք է հարկեր վճարեին: Հովսեփը և Մարիամը սպրում էին Նազարեթում: Նրանք պետք է անցնեին 105 կմ, որ հասնեին Բեթլեհեմ՝ իրենց հարկերը վճարելու համար:

Դուկաս Բ. 17, 20



Մարիամի համար հեշտ չէր ճանապարհորդել Բեթլեհեմ: Նրա երեխան պետք է շուտով ծնվեր:

Դուկաս Բ. 17, 20



Երբ Հովսեփը և Մարիամը հասան Բեթլեհեմ, բոլոր սենյակաները զբաղված էին մարդկանցով: Մարիամը և Հովսեփը ստիպված էին մնալ պիտոռում: Ախտոր մի տեղ է, որտեղ պահում են կենդանիներին:

Դուկաս Բ. 17, 20



Այնտեղ էլ երեխան ծնվեց: Մարիամը Նրան փաթաթեց կտորների մեջ և դրեց մսուրի մեջ: Հովսեփը և Մարիամը իրենց երեխայի անունը դրեցին Հիսուս:

Ղուկաս Բ.17, 20



Այն գիշեր, երբ ծնվեց Հիսուսը, հովիվները արածացնում էին իրենց ոչխարներին Բեթլեհեմի կողքի դաշտերում: Մի հրեշտակ հայտնվեց նրանց: Հովիվները վախեցան:

Ղուկաս Բ.17, 20




Հրեշտակը նրանց ասաց, որ չվախենան: Նա հիանալի լուր ուներ. Փրկիչը՝ Հիսուս Բրիստոսը, ծնվել էր Բեթլեհեմում: Նրանք կարող էին գտնել Նրան մտուրի մեջ պառկած:

Ղուկաս Բ.17, 20



Հովիվները գնացին Բեթլեհեմ, որտեղ տեսան մանուկ Հիսուսին:

Ղուկաս Բ.17, 20




Հովիվները ուրախ էին, որ տեսան Փրկչին: Նրանք մյուս մարդկանց պատմեցին իրենց լսածի ու տեսածի մասին:

Ղուկաս Բ.17, 20



Գ Լ Ո Ւ Խ 6

Տաճար տարվելը



Երբ Հիսուսը միայն մի քանի շաբաթական էր, Նրա ծնողները Նրան բերեցին Երուսաղեմ, որպեսզի տանեն տաճար:

Ղուկաս Բ.22



Միմեռնը, որը Երուսաղեմում ապրող մի արդար մարդ էր, այդ ժամանակ տաճարում էր: Սուրբ Հոգին

Նրան ասել էր, որ մահանալուց առաջ նա կտեսներ Քրիստոսին:

Ղուկաս Բ.25–26




Միմեռնը տաճարում տեսավ մանուկ Հիսուսին: Նա պահեց Նրան իր ձեռքերում և փառավորեց Աստծուն:

Ղովկաս Բ.27–29



Միմեռնն ասաց, որ մանուկը բոլոր մարդկանց փրկություն կրեի: Հովսեփը և Մարիամը զարմանում էին, լսելով նրան:

Ղովկաս Բ.30–33



Աննա անունով մի այրի կին նույնպես տեսավ Հիսուսին և իմացավ, թե ով է Նա: Նա

շնորհակալություն հայտնեց և շատ մարդկանց պատմեց Նրա մասին:

Ղովկաս Բ.36–38




Գ Լ Ո Ւ Խ 7

Իմաստունները



Մեկ այլ երկրում ապրում էին իմաստուններ: Նրանք գիտեին, թե ինչ էին մարգարեներն ասել Հիսուսի ծննդի մասին: Երբ նրանք նոր աստղ տեսան երկնքում, նրանք հասկացան, որ նոր թագավոր է ծնվել:

Մատթևոս Բ. 1-2



Իմաստունները գնացին Երուսաղեմ Հրեաների թագավոր Հերովդեսին տեսնելու: Նրանք նրան հարցրեցին, թե որտեղ է նոր թագավորը: Հերովդեսը նրանց ասաց, որ փնտրեն Բեթլեհեմում: Երբ նրանք գտնեին երեխային, նրանք պետք է հետ գային և պատմեին Հերովդեսին:

Մատթևոս Բ. 1-2, 8



Իմաստունները գնացին Բեթլեհեմ և գտան Հիսուսին: Նրանք երկրպագեցին Նրան և նվերներ տվեցին: Երազում նրանց ասվեց, որ հետ չգնան Երուսաղեմ և Հերովդեսին չասեն, թե որտեղ էր մանուկը: Նրանք հետ չգնացին:

Մատթևոս Բ. 11-12




Գ Լ Ո Ւ Խ 8

Չար թագավոր Հերովդեսը



Ի մաստունները Հերովդեսին ասացին, որ Հիսուսը պետք է թագավոր դառնար: Հերովդեսը ուզում էր լինել միակ թագավորը: Նա իր զինվորներին հրամայեց, որ սպանեն բոլոր մանուկներին Բեթլեհեմում և մոտակա վայրերում:

Մատթևոս Բ.3, 13, 16




Հրեշտակը Հովսեփին պատվիրեց տանել Մարիամին և Հիսուսին Եգիպտոս՝ Բեթլեհեմից հեռու մի երկիր: Հերովդեսը չէր որոնի Հիսուսին այնտեղ:

Մատթևոս Բ.13



Հովսեփը հնազանդվեց: Նա, Մարիամը և Հիսուսը Եգիպտոսում էին, երբ Հերովդեսի զինվորները սպանեցին Բեթլեհեմի և մոտակա վայրերի բոլոր մանուկներին:

Մատթևոս Բ.14, 16



Հերովդես թագավորի մահից հետո հետո հրեշտակը
Հովսեփին ասաց, որ Հիսուսին և Մարիամին տուն

տանի: Հովսեփը տարավ նրանց Նազարեթ, որտեղ
Հիսուսը ապահով էր:

Մատթեոս Բ. 19–21, 23



Գ Լ Ո Ւ Խ 9

Պատանի Հիսուսը



Հիսուսը մեծանում էր Նազարեթ քաղաքում:
Նա շատ բաներ սովորեց և «գորացավ հոգիով
ամուր, . . . և Աստծո շնորհը նրա վրա էր»:

Ղովաս Բ.39–40



Երբ Հիսուսը 12 տարեկան էր, Նա Հովսեփի, Մարիամի
և մի խումբ մարդկանց հետ գառակի տոնին գնաց
Երուսաղեմ: Նրանք այնտեղ մնացին մի քանի օր:

Ղովաս Բ.41–43



Երբ Հովսեփը և Մարիամը վերադառնում էին տուն, նրանք կարծեցին, թե Հիսուսը Իր ընկերների հետ

նույնպես գնում է Նազարեթ: Սակայն Հիսուսը մնացել էր Երուսաղեմում:

Ղովկաս Բ.43–44



Երբ Հովսեփը և Մարիամը սկսեցին փնտրել Հիսուսին, նրանք չէին կարողանում գտնել Նրան: Ոչ ոք խմբից չէր տեսել Նրան: Հովսեփը և Մարիամը ետ գնացին

Երուսաղեմ: Նրանք Հիսուսին փնտրում էին երեք օր: Նրանք շատ տխուր էին:

Ղովկաս Բ.44–46



Վերջապես նրանք գտան Հիսուսին տաճարում, որտեղ նա գրուցում էր ուսուցիչների հետ: Նա պատասխանում

էր նրանց հարցերին: Ուսուցիչները զարմացել էին, լսելով, թե որքան շատ բան գիտեր Հիսուսը:

Ղուկաս Բ. 46–47 (տես ծանուցում 46)



Մարիամը Հիսուսին ասաց, որ Նա և Հովսեփը
անհանգստանում էին: Հիսուսը պատասխանեց,

որ Նա կատարում էր Իր Հոր՝ Աստծո աշխատանքը:
Հովսեփը և Մարիամը չհասկացան:

Ղուկաս Բ.48-50



Հիսուսը Հովսեփի և Մարիամի հետ վերադարձավ
Նազարեթ և հնազանդվեց նրանց:

Ղուկաս Բ.51



Հիտուար ավելի ու ավելի շատ էր սովորում Իր Երկնային Հոր աշխատանքի մասին:

Ղովկաս Բ.52



Նա մեծանում էր՝ դառնալով բարձրահասակ և ամուր:

Ղովկաս Բ.52



Մարդիկ սիրում էին Նրան: Նա անում էր այն, ինչ Աստված ուզում էր:

Ղովկաս Բ.52



Աստված սիրում էր Նրան:

Ղովկաս Բ.52




Գ Լ Ո Ւ Խ 10

Հիսուսը մկրտվում է



Հովհաննեսը շատ տարիներ ապրում էր անապատում: Նա հագնում էր ուխտի մորթուց կարած շորեր և մեղր ու մորեխ էր ուտում: Մարդիկ քաղաքներից գալիս էին, որ լսեին, թե ինչ էր նա սովորեցնում: Նրան անվանում էին Հովհաննես Մկրտիչ:

Մատթեոս 9.1-5



Հովհաննես Մկրտիչը մարդկանց սովորեցնում էր Հիսուս Քրիստոսի մասին: Նա նրանց ասում էր, որ ապաշխարեին իրենց մեղքերից և մկրտվեին:

Հովհաննեսը մկրտում էր նրանց, ովքեր ապաշխարում էին իրենց մեղքերը:

Մատթեոս 9.2-3, 5-6



Մարդիկ Հովհաննես Մկրտչին հարցնում էին, թե ինչպես կարող էին ավելի լավ կյանքով ապրել: Նա նրանց ասում էր, որ կիսավեհին աղքատների հետ, ասելին

ճշմարտությունը և արդար լինելին ուրիշների համարեա: Նա ասում էր, որ Հիսուս Քրիստոսը շուտով գալու է: Հիսուսը պետք է նրանց տար Սուրբ Հոգու պարգևը:

Մատթեոս 9.2, 11–12; Ղուկաս 9.10–14



Մի օր, երբ Հովհաննես Մկրտիչը մկրտում էր մարդկանց Հորդանան գետում, Հիսուս Քրիստոսը եկավ նրա մոտ: Նա Հովհաննեսին խնդրեց մկրտել Իրեն: Հովհաննեսը զիտեր, որ Հիսուսը միշտ

հնազանդվում էր Աստծո պատվիրաններին և կարիք չուներ ապաշխարելու: Հովհաննեսը մտածում էր, որ Հիսուսը կարիք չուներ մկրտվելու:

Մատթեոս 9. 13–15; 2 Նևկի 31.5–7



Մակայն Աստված պատվիրել էր բոլոր մարդկանց մկրտվել, և Հիսուսը Հովհաննեսին ասաց, որ մկրտի

Իրեն: Հիսուսը մեր բոլորիս օրինակ ցույց տվեց, երբ հնազանդվեց մկրտվելու Աստծո պատվիրանին:

Մատթեոս 9. 16; 2 Նևկի 31.7–9



Երբ Հիսուսը դուրս եկավ ջրից, Սուրբ Հոգին այցելեց Նրան: Աստված խոսեց երկնքից, ասելով. «Դա է իմ սիրելի որդին, որին ես հավանեցի»: Հովհաննես

Մկրտիչը նույնպես վկայեց, որ Հիսուսը Աստծո Որդին էր:

Մատթեոս 9. 16–17; Հովհաննես Ա.33–36; Հիսուս Քրիստոս 150



Գ Լ Ո Ւ Խ 11

Հիսուսը փորձվում է



Հիսուսը գնաց անապատ, որ Աստծո հետ լիներ:
Քրիստոսը խոսեց Երկնային Հոր հետ: Նա 40 օր
ոչինչ չէր ուտում, որովհետև ծոմ էր պահում:

*Մատթեոս Գ. 1–2 (տես ծանուցում 1b և 2c);
Դուկաս Դ. 1–2 (տես ծանուցում 2Ա)*



Սատանան եկավ և փորձեց Հիսուսին, պահանջելով,
որ Նա ապացուցի, որ Աստծո Որդին է: Նա Հիսուսին
ասաց, որ քարերը հաց դարձնի: Հիսուսը սոված էր,

բայց Նա գիտեր, որ պետք է օգտագործեր Իր
գործությունը մարդկանց օգնելու համար: Նա չարեց
այն, ինչ ասում էր սատանան:

Մատթեոս Դ. 2–4; Հիսուս Քրիստոս, 128–29



Հետո Սուրբ Հոգին Հիսուսին տարավ բարձր տեղ՝ տաճարի վրա: Սատանան փորձեց Հիսուսին երկրորդ անգամ, ասելով, որ Նա Իրեն ցած զցի տաճարի պատից: Սատանան ասաց, որ եթե Հիսուսը Աստծո

Որդին էր, ապա հրեշտակները թույլ չէին տա, որ Նա վնասվեր: Հիսուսը չցատկեց: Նա գիտեր, որ սխալ էր օգտագործել Իր Սուրբ գործությունները այդ ճանապարհով:

Մատթևոս Դ.5–7 (տես ծանուցում 5Ա և 6Ա)



Ապա Սուրբ Հոգին տարավ Հիսուսին մի լեռան գագաթ: Նա Հիսուսին ցույց տվեց աշխարհի բոլոր թագավորությունները և գանձերը: Սատանան Հիսուսին ասաց, որ Նա կարող էր ունենալ այդ ամենը, եթե հնազանդվեր իրեն: Հիսուսն ասաց,

որ կինազանդվի միայն Երկնային Հորը: Նա ասաց սատանային, որ հեռանա: Սատանան հեռացավ: Հրեշտակները եկան և օրհնեցին Հիսուսին: Հիսուսը պատրաստ էր սկսելու Իր աշխատանքը:

Մատթևոս Դ.8–11 տես ծանուցում 8Ա և 9Ա)



Գ Լ Ո Ւ Խ 12

Հարսանիք Կանայում




Հիսուս Քրիստոսը և Նրա աշակերտները գնացին հարսանիքի Կանայում: Մարիամը՝ Հիսուսի մայրը, այնտեղ էր: Նա Հիսուսին ասաց, որ այլևս գինի չկար հյուրերի համար:

Հովհաննես Բ.1-3



Հիսուսը հարգում և սիրում էր Իր մորը: Նա հարցրեց, թե ինչ էր մայրը ցանկանում, որ Ինքն անի:

Հովհաննես Բ.4 (տես ծանուցում 4a)



Մարիամն ասաց հարսանիքին ներկա ծառաներին անել այն, ինչ Հիսուսը նրանց կասի:

Հովհաննես Բ.5




Հիտուար ծառաներին ասաց, որ վեց մեծ քարե կճուճները լցնեն ջրով: Ամեն մի կճուճը տանում էր 68-ից մինչև 102 լիտր հեղուկ: Այնուհետև նա ջուրը գինի դարձրեց:

Հովհաննես Բ.6-7



Նա ծառաներին ասաց, որ գինի հանեն կճուճներից և մատուցեն այն խնջույքի ղեկավարին:

Հովհաննես Բ.8



ճաշկերույթի ղեկավարը զարմացավ, երբ խմեց գինին: Լավագույն գինին սովորաբար մատուցում էին ճաշկերույթի սկզբին: Սակայն այս անգամ, լավագույն գինին մատուցվեց վերջում:

Հովհաննես Բ.9-10



Սա առաջին հրաշքն էր, որը գրի առնվեց և որը Հիտուար գործեց երկրի վրա ապրելիս: Նա դա արեց Իր մորն օգնելու համար: Դա նաև օգնեց ամրացնել Նրա աշակերտների հավատքը:

Հովհաննես Բ.11



Գ Լ Ո Ւ Խ 13

Հիսուսը և Նրա Երկնային Հոր Տունը



Հիսուսը գնաց Երուսաղեմի տաճար: Այնտեղ շատ մարդիկ կային, որոնք զոհաբերություն էին կատարում կենդանի սպանելով և խորանի վրա պրելով: Զոհաբերությունը օգնում էր մարդկանց մտածել Փրկչի մասին, որը պետք է Իրեն զոհաբերեր և մահանար մարդկանց համար:

Ղեսսցիս Ա.3-9; Հովհաննես Բ.13; Մովսես 5.5-7



Որոշ մարդիկ կենդանի չունեին, որ զոհաբերեին: Նրանց համար տաճարում կենդանիներ էին վաճառում: Վաճառողները ուզում էին շատ փող աշխատեին: Նրանք չէին մտածում Աստծո մասին:

Հովհաննես Բ.14



Հիսուսը տեսավ, ինչպես էին մարդիկ կենդանիներ վաճառում տաճարում: Նա ասաց, որ տաճարը Երկնային Հոր տունն է, որը սուրբ վայր է: Նա ասաց, որ մարդիկ չպետք է այնտեղ որևէ բան վաճառեին կամ գնեին:

Հովհաննես Բ.16



Հիսուսը մտրակ պատրաստեց, շուռ տվեց սեղանները, շարտեց դրամը հատակին և ստիպեց, որ վաճառականները հեռանային տաճարից: Նա

թույլ չէր տա, որ նրանք շար գործեր կատարեին Երկնային Հոր տանը:

Հովհաննես Բ. 15–16



Գ Լ Ո Ւ Խ 14

Նիկողեմոս



Նիկողեմոսը պատկանում էր Հրեաների մի խմբի, որոնք կոչվում էին Փարիսեցիներ: Նա նաև Հրեաների ղեկավարն էր: Շատ Փարիսեցիներ չէին հավատում, որ Հիսուս Քրիստոսին ուղարկել էր Աստված: Բայց Նիկողեմոսը հավատաց, տեսնելով Հիսուսի գործած հրաշքները:

Հովհաննես 9.1-2



Մի գիշեր Նիկողեմոսը եկավ Փրկչի հետ խոսելու: Հիսուսը նրան ասաց, որ ոչ ոք չի կարող մտնել Աստծո առթայությունը առանց կրկին ծնվելու:


Հովհաննես 9.2-3



Նիկողեմոսը չհասկացավ: Ինչպե՞ս կարող է մարդը նորից ծնվել: Փրկիչը բացատրեց, որ Նա խոսում էր

հոգևոր բաների մասին: Նորից ծնվելու համար մարդը պետք է մկրտվի ջրում և ստանա Սուրբ Հոգին:

Հովհաննես 9.4–7



Հիսուսը բացատրեց, որ ուղարկվել էր երկիր, որպեսզի օգներ բոլորիս վերադառնալ Երկնային Հոր մոտ: Նա ասաց, որ պետք է տանջվեր մեր մեղքերի համար և մահանար իսաչի վրա, որպեսզի մենք կարողանայինք հավերժական կյանք ունենալ:

Հովհաննես 9.12–17



Նա ասաց, որ մենք պետք է հավատանք Իրեն և ընտրենք ճիշտը: Եթե մենք անենք այն, ինչը ճիշտ է, մենք հավերժ կապրենք Աստծո արքայությունում:

Հովհաննես 9.18–21



Գ Լ Ո Ւ Խ 15

Կինը ջրհորի մոտ



Հիսուսը Երուսաղեմից գնաց Գալիլեա: Նա ճանապարհորդեց Սամարիայով և հասավ մի ջրհորի:

Հովհաննես Դ.3-6



Նա հոգնած էր և որոշեց հանգստանալ ջրհորի մոտ: Սամարացի մի կին եկել էր ջուր տանելու: Հիսուսը խնդրեց, որ նա իրեն ջուր տար:

Հովհաննես Դ.6-7



Քանի որ հրեաները սովորաբար չէին խոսում Սամարացիների հետ, կինը զարմացավ:

Հովհաննես Գ.9



Հիսուսն ասաց կնոջը, որ կարող էր նրան տալ այնպիսի ջուր, որ նա երբեք այլևս չծարավի: Նա բացատրեց, որ Ինքը Փրկիչն է: Ջուրը, որը նա կարող էր նրան տալ, հավերժական կյանքի կենդանի ջուրն էր:

Հովհաննես Գ.10, 13-15, 25-26



Կինը գնաց քաղաք և շատ մարդկանց պատմեց Հիսուսի մասին: Նրանք գնացին ջրհորի մոտ, որ

լսեին Հիսուսին: Նրանցից շատերը հավատացին Նրա խոսքերին:

Հովհաննես Գ.28-30, 39-42



Գ Լ Ո Ւ Խ 16

Ղեկավարի Որդին



Հրեաների ղեկավարը մի որդի ուներ, որը ծանր հիվանդ էր: Բոլորը մտածում էին, որ նրա որդին շուտով կմահանա:

Հովհաննես Դ.46-47



Այդ մարդը թողեց իր որդուն տանը և երկար ճանապարհի անցավ՝ հասնելով Կանա քաղաք: Այնտեղ նա տեսավ Հիսուսին:

Հովհաննես Դ.47



Այդ մարդը խնդրեց Փրկչին գալ և բուժել իր որդուն: Հիսուսը նրան ասաց, որ նրա որդին կբուժվի: Մարդը հավատաց Հիսուսին և գնաց տուն:

Հովհաննես Դ.47-50



Նրա ծառաները եկան նրան դիմավորելու: Նրանք նրան ասացին, որ նրա որդին լավացել է և կապրի: Նա հարցրեց նրանց, երբ նրա որդին սկսեց լավանալ:

Նրանք ասացին: Դա այն պահին էր, երբ Հիսուսն ասաց, որ նրա որդին կբուժվի:

Հովհաննես Դ.51-53



Մարդը հասկացավ, որ Հիսուս Քրիստոսը բուժեց իր որդուն: Նա և նրա ամբողջ ընտանիքը հավատացին Փրկչին:

Հովհաննես Դ.53




Գ Լ Ո Ւ Խ 17

Զայրացած մարդիկ Նազարեթում



Հիտուար գնաց Նազարեթ, այն քաղաքը, ուր նա
մեծացել էր:

Ղուկաս Դ.16



Հիտուար գնաց ժողովարան, մի շենք, որտեղ
հրեաները եկեղեցի էին գնում: Նա կանգնեց և սկսեց
կարդալ սուրբ գրություններից: Նա կարդաց մարգարե
Եսայիայի խոսքերից: Եսայիան ասել էր, որ Փրկիչ
է գալու երկիր և օգնելու է մարդկանց:

Ղուկաս Դ.16-19



Երբ Հիտուար փակեց սուրբ գրությունները և նստեց,
բոլոր մարդիկ նայեցին Նրան:

Ղուկաս Դ.20



Հիտուն ասաց, որ Եսայիայի խոսքերը Իր մասին էին, որ Ինքն էր Փրկիչը: Մարդիկ զարմացան, լսելով Նրա խոսքերը: Նրանք ասացին. «Չէ՞ որ սա Հովսեփի որդին է»: Նրանք չհավատացին, որ Հիտուր Աստծո Որդին էր:

Ղովկաս 7.21-22




Փրկիչը գիտեր, թե ինչ էին նրանք մտածում: Նրանք ուզում էին, որ Նա հրաշքներ գործեր: Սակայն Հիտուր նրանց ասաց, որ Նա հրաշքներ չի կատարի նրանց համար, քանի որ նրանք հավատք չունենին Իր հանդեպ:

Ղովկաս 7.23-27



Դա զայրացրեց մարդկանց: Նրանք Հիտուսին տարան բլրի գագաթ և ուզեցին գցել այնտեղից:

Ղովկաս 7.28-29



Հիտուր փախչեց նրանցից և գնաց ուրիշ քաղաք:

Ղովկաս 7.30-31



Գ Լ Ո Ւ Խ 18

Հիսուսն ընտրում է Իր Առաքյալներին



Մի օր Հիսուսը նավակի վրայից ուսուցանում էր Գալիլեայի ծովի ափին գտնվող մարդկանց: Նավակը պատկանում էր Պետրոս անունով մի մարդու:

Ղովաս Ե.1-3



Պետրոսը և նրա ընկերները ամբողջ գիշեր ձուկ էին որսացել, սակայն ոչինչ չէին բռնել: Երբ Հիսուսն ավարտեց ուսուցանումը, Նա Պետրոսին պատվիրեց

վերցնել նավակը և գնալ ավելի խորը: Ապա Նա Պետրոսին և նրա ընկերներին ասաց, որ ջուրը զցեն ձկնորսական ուռկանը:

Ղովաս Ե.4-5




Նրանք այնքան շատ ձուկ որսացին, որ ցանցերը սկսեցին պատռվել:

Ղուկաս Ե.6



Պետրոսը կանչեց մյուս նավակի իր ընկերներին, որ գալին իրենց օգնելին: Երկու նավակներն այնպես լցվեցին ձկներով, որ սկսեցին խորտակվել:

Ղուկաս Ե.7



Պետրոսը և նրա ընկերները զարմացել էին: Նրանք գիտեին, որ դա արեց Հիսուս Քրիստոսը:

Ղուկաս Ե.8-9



Պետրոսը ծնկի իջավ Փրկչի ոտքերի առաջ: Նա ասաց, որ արժանի չէ լինելու Հիսուսի կողքին: Հիսուսն ասաց, որ Պետրոսը չվախենա:

Ղուկաս Ե.8-10



Պետրոսի ընկերներից երկուսը, Հակոբոսը և Հովհաննեսը, եղբայրներ էին: Հիսուսը Պետրոսին, Հակոբոսին և Հովհաննեսին ասաց, որ հետևեն Իրեն

և դառնան մարդկանց որսորդներ: Մարդիկ ամեն ինչ թողեցին և գնացին Հիսուսի հետ: Փրկիչը նաև ուրիշ մարդկանց խնդրեց հետևել Իրեն:

Մատթեոս Դ. 18-22; 9,9; Գովհաս Ե. 10-11; Հովհաննես Ա. 35-51



Հիտուար ընտրեց տասներկու Առաքյալներ, որոնք պետք է ղեկավարեին Նրա Եկեղեցին: Նա աղոթեց ողջ գիշեր, որպեսզի կարողանար ընտրել ճիշտ մարդկանց:

Հաջորդ առավոտ Նա ընտրեց և կարգեց տասներկու տղամարդ, տալով նրանց քահանայություն և Առաքյալներ լինելու իշխանություն:

Մարկոս 9.14; Դուկաս 9.12-16; Հովհաննես 6Ե.16



Առաքյալները ճանապարհորդում էին տարբեր քաղաքներ: Նրանք ուսուցանում էին ավետարանը և

բուժում մարդկանց: Նրանք վերադարձան, որպեսզի ասեին Հիտուսին, թե ինչ էին արել:

Մարկոս 9.30; Դուկաս 10.1-6, 10



Գ Լ Ո Ւ Խ 19

Լեռան Բարոզը



Մի օր Հիսուսը Իր աշակերտներին ուսուցանում էր ավետարանը Գալիլեայի ծովի լեռնային մասում:

Մատթևոս Ե.1



Նա նրանց ասաց, թե ինչպես ապրեն, որպեսզի երջանիկ լինեն և կրկին Երկնային Հոր հետ ապրեն:


Այն, ինչ Նա սովորեցրեց նրանց, կարող են մեզ նույնպես երջանիկ դարձնել:

Մատթևոս Ե-Է



Հիտուն ասաց, որ մենք պետք է լինենք մեղմ, համբերատար և պատրաստ հնազանդվելու Երկնային Հորը:

Մատթևոս Ե.5



Մենք պետք է աշխատենք ամեն կերպ լինել արդար:

Մատթևոս Ե.6



Մենք պետք է ներենք մարդկանց, որոնք մեզ վիրավորում են: Եթե մենք ներենք նրանց, Երկնային Հայրը կների մեզ:

Մատթևոս Ե.7



Մենք պետք է լինենք խաղաղարարներ, սիրենք մարդկանց և օգնենք բոլորին սիրել միմյանց:

Մատթևոս Ե.9




Մենք չպետք է վախենանք մարդկանց պատմել ավետարանի մասին կամ ցույց տալ նրանց, որ մենք սիրում ենք Երկնային Հորը: Երբ մյուս մարդիկ տեսնում են, որ մենք բարիք ենք գործում, նրանք սկսում են նույնպես հավատալ Աստծուն:

Մատթևու Ե.14-16



Մենք միշտ պետք է պահենք մեր խոստումները:

Մատթևու Ե.33-37



Եվ ինչպես մենք ենք ցանկանում, որ մյուսները բարի լինեն մեր հանդեպ, մենք պետք է բարի լինենք նրանց հանդեպ:

Մատթևու Ե.12



Հիտունն ասել է, որ եթե մենք անենք այդ բաները, մենք երջանիկ կլինենք, Երկնային Հայրը կօրհնի մեզ, և մենք կրկին Նրա հետ կապրենք:

Մատթևու Ե.2-12



Գ Լ Ո Ւ Խ 20

Հիսուսը սովորեցնում է աղոթքի մասին



Հիսուսը Իր աշակերտներին սովորեցրեց, ինչպես պետք է աղոթել: Նա ասաց, որ որոշ մարդիկ աղոթում են միայն նրա համար, որպեսզի վիուսները տեսնեն իրենց աղոթելիս: Հիսուսը ուսուցանեց, որ, եթե հնարավոր է, մենք պետք է ասենք մեր անձնական աղոթքները, երբ մենակ ենք:


Մատթեոս 9.5-6



Նա ասաց, որ որոշ մարդիկ աղոթելիս կրկնում են նույն խոսքերը: Նրանք իրականում չեն մտածում այն մասին, թե ինչ են ասում: Հիսուսն ասաց, որ մենք

պետք է անկեղծորեն աղոթենք նրա համար, ինչի կարիքն ունենք:

Մատթեոս 9.7-8



Փրկիչն աղոթք ասեց, որպեսզի Նրա աշակերտները տեսնեին, թե ինչպես պետք է աղոթել: Նա սկսեց, ասելով «Մեր Երկնային Հայր»: Նա փառավորեց Երկնային Հորը և ապա խնդրեց Նրան օգնել: Նա

ասաց «ամեն» Իր աղոթքի վերջում: Ավելի ուշ, Հիսուսն Իր աշակերտներին ասաց, որ աղոթեն Հորը իր անունով: Նա խոստացավ, որ Երկնային Հայրը կպատասխանի մեր աղոթքներին:

Մատթևոս 9.9–13; ԻՍ.22; Հովհաննես 14.23



Գ Լ Ո Ւ Խ 2 1

Հիսուսը սաստում է քամիներին և ալիքներին




Հիսուսը և Նրա աշակերտները նավակով նավարկում էին Գալիլեան ծովում: Հիսուսը քնեց: Քամին սկսեց շատ ուժգին փչել և ալիքները ջուր էին լցնում նավակի մեջ: Աշակերտները վախեցան, որ նավակը կխորտակվի: Նրանք արթնացրեցին Հիսուսին և խնդրեցին Նրան օգնել:

Ղուկաս Ը.22-24



Փրկիչը հրամայեց, որ քամիները դադարեն փչել, իսկ ալիքները հանդարտվեին: Քամին դադարեց և ծովը հանդարտվեց:

Ղուկաս Ը.24



Հիսուսը աշակերտներին հարցրեց, թե ինչու էին նրանք վախեցած: Նա ասաց, որ նրանք պետք է ավելի շատ հավատք ունենան: Նրանք զարմացան, թե ինչպես կարող է մարդը սաստել անգամ քամիներին և ծովին:

Մարկոս Դ.40; Ղուկաս Ը.25



Գ Լ Ո Ւ Խ 22

Չար հոգիներով մարդը




Մի մարդ, որն ապրում էր Գալիլեան ծովի գերեզմանոցի մոտ, չար հոգի ուներ իր մեջ, և դա ստիպում էր նրան չար գործեր կատարել: Մարդիկ նրան շղթաներով կապել էին, որպեսզի վերահսկեին նրան, բայց նա քանդել էր շղթաները:

Մարկոս Ե.1-4



Այդ մարդը օր ու գիշեր անց էր կացնում սարերում և քարանձավներում: Նա անընդհատ լաց էր լինում և իրեն կտրում քարերով:

Մարկոս Ե.5



Մի օր Հիսուսը և Նրա աշակերտները նավակով նավարկում էին Գալիլեան ծովում: Երբ Փրկիչը իջավ նավակից, այդ մարդը վազեց նրա մոտ:

Մարկոս Ե.1-2, 6



Հիսուսը հրամայեց, որ չար հոգին դուրս գա այդ մարդու միջից: Չար հոգին գիտեր, որ Հիսուսը Աստծո Որդին էր: Նա խնդրեց Հիսուսին չմտածել իրեն:

Մարկոս Ե. 7-8



Երբ Փրկիչը չար հոգուն հարցրեց նրա անունը, նա ասաց. «Իմ անունը Լեզիոն է», ինչը նշանակում է շատ: Մարդու մեջ շատ չար հոգիներ կային: Նրանք խնդրեցին Հիսուսին թույլ տալ իրենց մտնել մոտակայքում գտնվող խոզերի մարմինների մեջ:

Մարկոս Ե. 9-12



Հիսուսը համաձայնվեց: Չար հոգիները դուրս եկան մարդու միջից և մտան մոտ 2000 խոզերի մարմինների

մեջ: Խոզերը վազեցին և սարից իրենց գցեցին ծովի մեջ ու խորտակվեցին:

Մարկոս Ե. 13



Մարդիկ, որ պահում էին այդ խոզերին, վազեցին քաղաք և պատմեցին մարդկանց, թե ինչ պատահեց: Մարդիկ եկան և տեսան Հիսուսին ու խելագար մարդուն: Բայց մարդն այլևս խելագար չէր:

Մարկոս Ե. 14–15



Մարդիկ սկսեցին վախենալ Հիսուսից: Նրանք Նրան խնդրեցին, որ հեռանա: Նա վերադարձավ նավակի վրա:

Մարկոս Ե. 15–18



Մարդը, որը բուժվեց, ցանկացավ գնալ Նրա հետ: Փրկիչը նրան ասաց, որ գնա տուն և պատմի իր ընկերներին, թե ինչ պատահեց իր հետ:

Մարկոս Ե. 18–19



Այդ մարդն իր ընկերներին պատմեց և մարդիկ զարմացան, թե ինչ մեծ գործություն ունեւ Հիսուսը:

Մարկոս Ե. 20



Գ Լ Ո Ւ Խ 23

Մարդ, որը չէր կարողանում քայլել



Մի օր Հիսուսը տանը սովորեցնում էր մի խումբ մարդկանց:

Ղովկաս Ե.17



Մի քանի մարդ անկողնու վրա տանում էին իրենց ընկերոջը Հիսուսին տեսնելու համար: Նրանց ընկերը

չէր կարողանում քայլել: Մարդիկ չէին կարող մտցնել նրան տուն, որովհետև շատ մարդ կար:

Ղովկաս Ե.18–19



Մարդիկ իրենց ընկերոջը տարան կտուր: Նրանք կտուրի մի մասը քանդեցին և այնտեղից իջեցրեցին իրենց ընկերոջը տուն:

Մարկոս Բ.4; Ղուկաս Ե.19



Երբ Հիսուսը տեսավ այդ մարդկանց մեծ հավատքը, նա հիվանդին ասաց, որ նրա մեղքերը ներվել են: Նա նրան ասաց վերցնել իր անկողինը ու գնալ տուն:

Մարդը վեր կացավ: Նա բուժվեց: Նա վերցրեց իր անկողինը և գնաց տուն: Նա շատ շնորհակալ էր Աստծուն:

Ղուկաս Ե.20, 24–25



Գ Լ Ո Ւ Խ 24

Հայրոսի դուստրը վերակենդանա- նում է



Մի օր Հայրոսը, որը ժողովրդապետ էր, ընկավ Փրկչի ոտքերի մոտ:

Մարկոս Ե.21–22



Հայրոսն ասաց, որ իր 12-ամյա դուստրը ծանր հիվանդ էր: Նա աղաչում էր, որ Հիսուսը գար և օրհներ նրան: Նա հավատում էր, որ Հիսուսը նրան կլավացներ:

Մարկոս Ե.23, 42



Հիսուսը գնաց Հայրոսի ետևից նրա տուն, բայց կանգ առավ մի կնոջ բուժելու համար: Երբ նա խոսում էր այդ կնոջ հետ, ինչ-որ մեկն եկավ և Հայրոսին ասաց, որ շատ ուշ է և իր դուստրը մահացավ:

Մարկոս Ե.24–35



Հիսուսը լսեց այն, ինչ ասվեց: Նա Հայրոսին ասաց, որ չվախենա, այլ հավատա Իրեն:

Մարկոս Ե.36




Ապա Հիսուսը Հայրոսի հետ գնաց նրա տուն: Տունը լի էր մարդկանցով, որոնք լաց էին լինում փոքր աղջկա մահվան պատճառով:

Մարկոս Ե.37–38



Հիսուսը նրանց ասաց, որ աղջիկը մահացած չէր, այլ քնած էր: Մարդիկ ծիծաղում էին Նրա վրա: Նրանք համոզված էին, որ աղջիկը մահացած էր:

Մարկոս Ե.39–40



Փրկիչը պատվիրեց, որ բոլորը դուրս գան, բացի Իր աշակերտներից, Հայրուսից և Հայրուսի կնոջից: Նրանք գնացին այն սենյակ, որտեղ պատկած էր փոքր աղջիկը:

Մարկոս Ե.40



Հիտուար բռնեց աղջկա ձեռքը: Նա նրան ասաց, որ վեր կենար: Նա վեր կացավ և քայլեց: Նրա ծնողները զարմացած էին: Հիտուար նրանց ասաց, որ ոչ ոքի

չպատմեն, թե ինչ պատահեց: Ապա Նա ծնողներին ասաց, որ աղջկան ուտելիք տան:

Մարկոս Ե.41-43



Գ Լ Ո Ւ Խ 25

Կինը դիպչում է Հիսուսի զգեստին



Մի կին 12 տարի հիվանդ էր: Նա շատ բժիշկների մոտ էր գնացել, սակայն նրանք չէին կարողացել օգնել իրեն:

Մարկոս Ե.25-26



Մի օր նա տեսավ Հիսուսին, որը շրջապատված էր շատ մարդկանցով: Նա հավատում էր, որ եթե միայն

դիպչի Նրա զգեստին, կբուժվի: Նա անցավ ամբոխի միջով և դիպչեց Նրա զգեստին:

Մատթեոս Թ.20-22; Մարկոս Ե.27-28



Նա անմիջապես բուժվեց: Հիտուար շրջվեց և հարցրեց.
«Ո՞վ դիպչեց իմ հագուստին»:

Մարկոս Ե.29–30



Կինը վախեցավ: Նա ծնկի իջավ Փրկչի առաջ և
ասաց, որ նա դիպչեց Նրան: Հիտուար նրան ասաց,
որ Իր հանդեպ հավատքը բուժեց կնոջը:

Մարկոս Ե.33–34



Գ Լ Ո Ւ Խ 26

Հիսուսը ներում է մի կնոջ



Մի Փարիսեցի խնդրեց Փրկչին գալ իր տուն և ճաշել իր հետ:

Ղովկաս Է.36



Մի կին, որը շատ մեղքեր ուներ, ապրում էր այդ քաղաքում: Նա գիտեր, որ Հիսուսը ճաշում էր

Փարիսեցու տանը: Նա ուզում էր Հիսուսի համար ինչ-որ հատուկ բան անել:

Ղովկաս Է.37



Նա ծնկի իջավ և իր արցունքներով լվաց Փրկչի ոտքերը: Ապա Նա սրբեց Նրա ոտքերը իր մազերով և համբուրեց ոտքերը: Նա նաև անուշահոտ յուղ քսեց

Նրանց վրա: Փարիսեցին գիտեր, որ կինը շատ սխալ բաներ էր արել: Նա մտածում էր, որ Հիսուսը չպետք է թույլ տար, որ կինը դիպչեր Իրեն:

Ղուկաս Է.38-39



Փրկիչը գիտեր, թե ինչ էր մտածում Փարիսեցին: Նա Փարիսեցուն ասաց, որ այդ կինը ավելի շատ բան արեց Իր համար, քան Փարիսեցին: Փարիսեցին ջուր

չտվեց, որ Հիսուսը լվանա իր ոտքերը, ոչ էլ յուղ տվեց Նրա գլխին քսելու համար, ինչպես հաճախ արվում էր հյուրերի համար:

Ղուկաս Է. 44–46



Հիսուսը Փարիսեցուն ասաց, որ այդ կնոջ մեղքերը ներված էին, որովհետև Նա սիրում էր Փրկչին և


հավատք ուներ Նրա հանդեպ: Հիսուսն ասաց, որ կինը գնա խաղաղությամբ:

Ղուկաս Է. 47–50; Վարդապետություն և Ուխտեր 58.42-43; Հիսուս Քրիստոս, 262–63



Գ Լ Ո Ւ Խ 27

Կատարում էր Հոր աշխատանքը երկրի վրա




Հրեաների մի տոնն օր Փրկիչը գնաց Երուսաղեմում գտնվող Բեթհեզդայի ջրավազանի մոտ: Մարդիկ համարում էին, որ երբ ջրավազանի ջուրը շարժվում է, առաջին մարդը, որը մտնում է ջրի մեջ, բուժվում է:

Հովհաննես Ե.1-4



Հիսուսը մի մարդ տեսավ ջրավազանի մոտ, որը 38 տարի չէր քայլում: Կիրակի օր էր: Հիսուսը այդ մարդուն հարցրեց, թե արդյոք նա ուզում էր բուժվել: Մարդն ասաց, որ չի կարող բուժվել, որովհետև երբեք առաջինը չի կարողանա մտնել ջուրը:

Հովհաննես Ե.5-7



Հիսուսը մարդուն ասաց. «Վեր կաց, մահիճդ առ և ման եկ»: Մարդն անմիջապես բուժվեց:

Հովհաննես Ե.8-9



Շատ հրեաներ համարում էին, որ Կիրակի օրը
հրաշքներ կատարելը մեղք էր: Նրանք ուզում էին
սպանել Հիսուսին:

Հովհաննես Ե. 10–16



Հիսուսը պատասխանեց, որ Կիրակի օրը Նա անում
է միայն այն, ինչ կաներ Իր Հայրը:

Հովհաննես Ե. 17




Գ Լ Ո Ւ Խ 28

Հիսուսը կերակրում է 5000 մարդ



Հովհաննես Մկրտչի ընկերները Հիսուսին
ասացին, որ թագավորը սպանել է Հովհաննեսսին:

Մատթեոս ԺԴ.1-12



Երբ Հիսուսը լսեց դա, Նա գնաց Գալիլեյան ծովի մոտ մի տեղ, որպեսզի մենակ լիներ: Շատ մարդիկ գիտեին, թե որտեղ էր Նա: Ավելի քան 5000 մարդ հետևեցին Նրան, հույս ունենալով, որ Նա կուսուցաներ նրանց:

Մատթեոս ԺԴ.13; Մարկոս 2.44



Հիսուսը նրանց շատ բաներ ուսուցանեց: Ճաշելու ժամանակն էր, սակայն մարդկանց մեծ մասը ուտելիք չունեց: Նրա աշակերտները խնդրեցին, որ Հիսուսը մարդկանց ուղարկի մոտակա գյուղը ուտելիք գնելու համար:

Մարկոս 2.34-36



Հիսուսը աշակերտներին ասաց, որ նրանք տեսնելին, թե արդյոք ինչ-որ մեկը ուտելիք բերել է: Նրանք գտան մի տղայի, որը հինգ հատ հաց և երկու փոքր ձուկ էր բերել:

Մարկոս 2.37–38; Հովհաննես 2.9



Հիսուսը բոլոր մարդկանց ասաց, որ նստեն: Նա օրհնեց հացը և ձուկը, և բաժանեց մասերի:

Մարկոս 2.39–41



Աշակերտները բաժանեցին ուտելիքը մարդկանց: Կար բավական բոլորի համար, և անգամ ավելին:

Մարկոս 2.41–44



Գ Լ Ո Ւ Խ 29

Հիսուսը քայլում է ջրի վրայով



5000 մարդ կերակրելուց հետո Հիսուսը բարձրացավ սար աղոթելու: Նրա աշակերտները նավակ նստեցին, որ անցնեին Գալիլեայի ծովը: Երբ եկավ գիշերը, սկսեց քամի փչել և ալիքները բարձրացան:

Մատթևոս ԺԳ.22-24



Ավելի ուշ այդ գիշեր Հիսուսը եկավ, որ միանար Իր աշակերտներին: Նա քայլում էր ջրի վրայով, որպեսզի հասներ նավակին:

Մատթևոս ԺԳ.25



Աշակերտները տեսան, ինչպես էր Նա քայլում ջրի վրայով: Նրանք վախեցան: Նրանք կարծեցին, թե դա Հոգի էր: Հիսուսն ասաց նրանց. «Ես եմ, մի վախեցեք»:

Մատթևոս ԺԳ.26-27



Պետրոսը նույնպես ցանկացավ քայլել ջրի վրայով: Հիտուը Պետրոսին ասաց, որ գար էր մոտ: Պետրոսը դուրս եկավ նավակից: Նա սկսեց քայլել ջրի վրայով դեպի Փրկիչը:

Մատթևոս ԺԴ.28–29




Քանի որ քամին շատ ուժեղ էր փչում, Պետրոսը վախեցավ: Նա սկսեց խորտակվել և բացականչեց, որ Հիտուը փրկեր իրեն:

Մատթևոս ԺԴ.30



Փրկիչը բռնեց Պետրոսի ձեռքը: Նա հարցրեց Պետրոսին, թե ինչու նա չուներ ավելի մեծ հավատք:

Մատթևոս ԺԴ.31



Երբ Հիտուը և Պետրոսը նստեցին նավակ, փոթորիկը հանդարտվեց: Բոլոր աշակերտները երկրպագեցին Փրկչին: Նրանք գիտեին, որ Նա Աստծո Որդին էր:

Մատթևոս ԺԴ.32–33



Գ Լ Ո Ւ Խ 3 0

Կյանքի հացը



Հ աջորդ օրը շատ մարդիկ սկսեցին փնտրել Հիսուսին: Նրանք նավակներով գնացին Նրա ետևից Կափառնայում:

Հովհաննես 9.22, 24



Հիսուսը գիտեր, որ նրանք ուզում էին, որ Նա նորից կերակրեր իրենց:

Հովհաննես 9.26



Հիտուար նրանց ուսուցանեց, որ հացը կարող է նրանց կենդանի պահել միայն կարճ ժամանակով: Նա ասաց, որ կա մեկ այլ տեսակի հաց, որը նրանք պետք է

փնտրեն, դա Կյանքի Հացն է: Նա նրանց ասաց, որ Ինքն էր Կյանքի Հացը:

Հովհաննես Զ.27, 32–35



Հիտուար մարդկանց սովորեցրեց, որ Իր կյանքը պետք է զոհաբերեր նրանց համար: Նա ասաց, որ եթե նրանք


հետևեն և հավատան Իրեն, ապա հավերժական կյանք կստանան:

Հովհաննես Զ.47–51



Գ Լ Ո Ւ Խ 3 1

Հիսուսը բուժում է խուլ մարդուն



Մի քանի մարդ Հիսուսի մոտ մի մարդու բերեցին: Այդ մարդը խուլ էր և չէր կարողանում լսել խոսել: Մարդիկ ուզում էին, որ Փրկիչը բուժեր նրան:

Մարկոս Է.32



Հիսուսը այդ մարդուն մյուսներից հեռու տարավ: Նա Իր մատները դրեց մարդու ականջներին: Նա ձեռքով դիպչեց մարդու լեզվին և օրհնեց նրան:

Մարկոս Է.33–34



Մյուս մարդը կարողացավ լսել և խոսել: Մարդիկ կարողանում էին հասկանալ նրան: Հիսուսը խնդրեց, որ մարդիկ ոչ ոքի չասեն, թե ինչ կատարվեց, սակայն նրանք բոլորին ասացին:

Մարկոս Է.35–36



Գ Լ Ո Ւ Խ 3 2

Պետրոսը վկայում է Քրիստոսի մասին



Հիսուսը Իր աշակերտներին հարցրեց, թե ինչ էին մարդիկ մտածում Իր մասին:

Մատթևոս ԺԶ.13; Մարկոս Լ.27; Ղուկաս Թ.18



Աշակերտները պատասխանեցին, որ որոշ մարդիկ մտածում էին, թե Հիսուսը Հովհաննես Մկրտիչն էր:

Ուրիշները մտածում էին, թե Նա Հին Կտակարանի մարգարե էր, որը մահացած էր, իսկ հիմա հետ է եկել:

Մատթևոս ԺԶ.14; Մարկոս Լ.28; Ղուկաս Թ.19




Հիտուար հարցրեց Իր աշակերտներին, թե ինչ էին նրանք կարծում, թե ով էր Նա: Պետրոսն ասաց. «Դու ես Քրիստոսը՝ կենդանի Աստծո Որդին»:

Մատթևոս ԺԶ.15–16; Մարկոս Ը.29; Դովաս Թ.20



Հիտուար բացատրեց, որ Պետրոսի վկայությունը մարդկանց գիտելիքից չի գալիս: Նրա վկայությունը գալիս է Աստծուց ստացած հայտնությունից:

Մատթևոս ԺԶ.17



Հիտուար Պետրոսին խոստացավ, որ Նրան քահանայություն կտա և Իր Եկեղեցին ղեկավարելու իշխանություն: Հետո Պետրոսը և աշակերտները իշխանություն կունենան, որպեսզի հիմնեն Հիտուս Քրիստոսի Եկեղեցին երկրի վրա:

Մատթևոս ԺԶ.18–19



Հիտուար Իր աշակերտներին ասաց, որ դեռ ոչ ոքի չասեին, որ նա Քրիստոսն է: Նախ Նա պետք է տանջվեր, ապա սպանվեր և երրորդ օրը հարություն առներ մահացածներից:

Մատթևոս ԺԶ.20; Մարկոս Ը.30–31; Դովաս Թ.21–22



Գ Լ Ո Ւ Խ 33

Հայտնություն փառքի մեջ. Փոխակերպում



Հիսուսը Պետրոսին, Հակոբոսին և Հովհաննեսին տարավ բարձր սար աղոթելու համար:

Մատթեոս ԺԷ.1; Մարկոս Թ.2; Դովաս Թ.28



Երբ Հիսուսը աղոթում էր, Աստծո փառքը իջավ Նրա վրա: Նրա դեմքը փայլում էր արևի պես: Հին Կտակարանի մարգարեները, որոնց անուններն

էին Մովսես և Եղիա, հայտնվեցին Նրան: Նրանք խոսեցին Նրա գալիք մահվան և հարության մասին:

Մատթեոս ԺԷ.2-3; Մարկոս Թ.3-4; Դովաս Թ.29-31 (տես ծանուցում 31a)



Երբ Հիսուսը աղոթում էր, Առաքյալները քնեցին:
Ղուկաս Թ.32



Երբ նրանք արթնացան, նրանք տեսան Հիսուս Բրիստոսի, Մովսեսի և Եղիայի փառքը: Նրանք լսեցին Երկնային Հոր ձայնը, որը վկայեց. «Դա է իմ սիրելի Որդին, որին ես հավանել եմ, դուրան լսեցեք»:
Մատթեոս ԺԷ.5; Մարկոս Թ.7; Ղուկաս Թ.32, 35



Առաքյալները վախեցան և ընկան գետնին: Հիսուսը դիպչեց նրանց և ասաց, որ չվախենան: Երբ նրանք նայեցին վեր, երկնային սուրհանդակները արդեն

չկային: Հիսուսը Առաքյալներին ասաց, որ ոչ ոքի չասեն, թե ինչ տեսան, մինչև որ Նա ջմահանա և հարություն չառնի:

Մատթեոս ԺԷ.6-9; Մարկոս Թ.8-9



Գ Լ Ո Ւ Խ 3 4

Չար հոգով տղան



Մի օր մի մարդ ինտրեց Փրկչին օգնել իր որդուն: Տղայի մեջ չար հոգի կար: Աշակերտները արդեն փորձել էին բուժել նրա որդուն, սակայն չէին կարողացել:

Մարկոս Թ. 14–18




Հիտուար մարդուն ասաց, որ Իր մոտ բերեն որդուն: Երբ տղան եկավ, չար հոգին ստիպեց նրան ընկնել գետնին:

Մարկոս Թ. 19–20



Փրկիչը հարցրեց, թե որքան երկար էր չար հոգին տղայի մեջ գտնվում: Հայրն ասաց, որ մանկուց:

Մարկոս Թ. 21



Հիտուն ասաց, որ Նա կարող էր բուժել տղային, եթե նրա հայրը հավատք ունենար: Հայրը սկսեց լաց լինել: Նա ասաց, որ հավատք ուներ: Սակայն նա խնդրեց Հիտուսին օգնել իրեն ավելի շատ հավատք ունենալ:

Մարկոս Թ. 23–24



Հիտուսը հրամայեց, որ չար հոգին դուրս գա տղայի միջից և երբեք այլևս չվերադառնա: Չար հոգին զայրացած էր: Նա նորից տղային ցավ պատճառեց: Ապա նա հնազանդվեց Հիտուսին և հեռացավ:

Մարկոս Թ. 25–26



Տղան այնքան հանգիստ էր, որ շատ մարդիկ կարծեցին, թե նա մահացել է: Սակայն Հիտուսը բռնեց նրա ձեռքը և օգնեց վեր կենալ: Տղան բուժվեց: Չար հոգին հեռացել էր:

Մարկոս Թ. 26–27




Ավելի ուշ աշակերտները հարցրեցին Հիտուսին, թե ինչու իրենք չկարողացան հանել չար հոգին տղայի միջից: Հիտուսը նրանց ասաց, որ երբեմն նրանք պետք է ծոմ պահեն և աղոթեն, որպեսզի մարդը բուժվի:

Մատթեոս ԺԷ. 20–21; Մարկոս Թ. 28–29



Գ Լ ո ի խ 3 5

Բարի Մամարացին



Հիտուար շատ պատմություններ կամ առակներ էր պատմում, որպեսզի օգներ մարդկանց սովորել ճշմարտությունը:




Մի օր հրեաների մի ղեկավար Հիտուսին հարցրեց, թե ինչ նա պետք է անի, որպեսզի հավերժական կյանք ունենա: Փրկիչը նրան հարցրեց, թե ինչ են ասում սուրբ գրությունները: Ղեկավարն ասաց, որ մարդ պետք է սիրի Աստծուն և իր մերձավորին: Հիտուսն ասաց, որ դա ճիշտ է: Ապա ղեկավարը հարցրեց. «Ո՞վ է իմ մերձավորը»:

Ղովկաս Ժ.25–29



Հիտուար պատասխանեց պատմությունով: Մի օր մի հրեա ճանապարհով գնում էր Երիքով քաղաք: Գողերը թալանեցին և ծեծեցին նրան: Նրանք այդ մարդուն կիսամահ թողեցին ճանապարհին:

Ղովկաս Ժ.30



Մի քիչ ուշ մի հրեա քահանա անցավ և տեսավ մարդուն: Քահանան անցավ ճանապարհի մյուս կողմը: Նա չօգնեց մարդուն:

Դովաս Ժ.31



Մեկ այլ հրեա, որ աշխատում էր տաճարում, նրա կողքով անցավ: Նա տեսավ վիրավոր մարդուն: Բայց նա նույնպես չօգնեց այդ մարդուն և անցավ ճանապարհի մյուս կողմը:

Դովաս Ժ.32



Ապա եկավ մի սամարացի: Հրեաները և սամարացիները լավ հարաբերություններ չունեին: Բայց երբ սամարացին տեսավ մարդուն, նա խղճաց

նրան: Նա կապեց մարդու վերքերը և շոր գցեց նրա վրա:

Դովաս Ժ.33–34; Հովհաննես Գ.9; Bible Dictionary, "Samaritans," 768



Սամարացին մարդուն տարավ իջևանատուն և խնամեց նրան մինչև մյուս օրը: Գնալուց առաջ

սամարացին իջևանատիրոջը փող տվեց և ասաց, որ խնամի այդ մարդուն:

Ղուկաս Ժ.34–35



Նրանից հետո, երբ Հիսուսը պատմեց այդ պատմությունը, Նա հրեա ղեկավարին հարցրեց, թե որն էր այդ երեք մարդկանցից այդ մարդու համար մերձավորը:

Ղուկաս Ժ.36




Ղեկավարն ասաց, որ սամարացին, որովհետև նա օգնեց այդ մարդուն: Հիսուսը հրեաների ղեկավարին ասաց, որ սամարացու նման լինի:

Ղուկաս Ժ.37



Գ Լ Ո Ւ Խ 36

Հիսուսը պատմում է երեք առակ




Մի օր Հիսուսը ուտում էր և խոսում մարդկանց հետ, որոնք, շատերի կարծիքով, մեղավոր էին: Մի քանի փարիսեցիներ տեսան Նրան:

Ղովկաս ԺԵ.1-2



Փարիսեցիները համոզված էին, որ լավ մարդիկ չպետք է խոսեին մեղավորների հետ: Նրանք մտածեցին, որ քանի որ Հիսուսը խոսում էր մեղավորների հետ, ապա նա լավ մարդ չէր:

Ղովկաս ԺԵ.2



Փրկիչը ուզում էր օգնել փարիսեցիներին հասկանալ, թե ինչու էր Ինքը մեղավորների հետ: Նա նրանց երեք առակ պատմեց: Առաջինը կորած ոչխարի մասին էր:

Ղովկաս ԺԵ.3; Մարգարե Զոզեֆ Սմիթի ուսմունքները, 277



Ա ռ ա ջ ի ն ա ռ ա կ

Կորած ոչխարը



Մի բարի հովիվ ուներ 100 ոչխար: Նրանցից մեկը կորել էր:

Ղուկաս ԺԵ.4



Հովիվը թողեց 99 ոչխարին և գնաց փնտրելու կորածին: Երբ նա գտավ, շատ ուրախացավ:

Ղուկաս ԺԵ.4-5



Հովիվը ոչխարներին տարավ տուն: Նա կանչեց իր բոլոր ընկերներին և հարևաններին, որ գան և ուրախանան իր հետ: Նա գտել էր կորած ոչխարին:

Ղուկաս ԺԵ.5-6




Հիտու Քրիստոսը փարիսեցիներին ասաց, թե ինչ էր նշանակում առակը: Նա ասաց, որ նրանք, ովքեր մեղք են գործում, նման են կորած ոչխարին:

Ղուկաս ԺԵ.7



Ինչպես հովիվն էր ուզում փրկել իր կորած ոչխարին, այնպես էլ Հիտուսը ուզում է փրկել նրանց, ովքեր մեղք են գործել:

Մարկոս Բ.17



Հիտուսն ասաց, որ այդ պատճառով էր խոսում մեղավորների հետ:

Մատթեոս ԺԸ.11 (տես ծանուցում 11Ե); Մարկոս Բ.17



Եվ ինչպես հովիվն ուրախացավ, երբ գտավ կորած ոչխարին, այնպես էլ Հիտուսն է ուրախանում, երբ մենք ապաշխարում ենք:

Ղուկաս ԺԵ.6-7



Երկրորդ առակ

Կորած դրամը



Մի կին ուներ 10 արծաթե դրամ: Նա կորցրեց մեկը: Նա այն փնտրեց ամբողջ տնով մեկ:

Նովաս ԺԵ.8



Վերջապես նա գտավ դրամը: Նա շատ երջանիկ էր: Նա կանչեց իր ընկերներին և հարևաններին և ասաց

Նրանց այդ մասին: Նրանք նույնպես ուրախ էին, որ նա գտել էր կորած դրամը:

Նովաս ԺԵ.9



Եկեղեցու ղեկավարները և անդամները նման են այդ պատմության կնոջը: Կորած դրամը նման է Եկեղեցու անդամին, որը չի գնում եկեղեցի կամ այլևս չի աշխատում ապրել ըստ պատվիրանների: Դա նման է նրանց Եկեղեցուց կորելուն: Հիտու Քրիստոսը

ուզում է, որ Եկեղեցու անդամները գտնեն բոլոր կորած եղբայրներին և քույրերին և օգնեն նրանց վերադառնալ Նրա մոտ: Նա շատ ուրախ է, երբ դա տեղի է ունենում:

Հիտուր Քրիստոսն է, 455–56



Այս պատմության մեջ ընկերները և հարևանները նման են Աստծո հրեշտակներին: Հրեշտակները շատ ուրախ են, երբ որևէ մեկն ապաշխարում է:

Ղուկաս ԺԵ.10



Երրորդ առակ

Կորած որդին



Մի մարդ երկու որդի ուներ: Հայրը խոստացել էր նրանց տալ իր փողերը, երբ մահանար: Փոքր որդին չցանկացավ սպասել: Նա խնդրեց, որ հայրը տար իր բաժինը: Հայրը տվեց նրան:

Ղուկաս ԺԵ.11-12



Որդին վերցրեց փողը և գնաց տնից: Նա գնաց ուրիշ երկիր: Որդին նորից ու նորից մեղքեր գործեց: Նա ծախսեց իր ողջ փողը:

Ղուկաս ԺԵ.13



Ի վերջո որդին փող չունեիք ուտելիք գնելու համար: Նա շատ քաղցած էր: Նա մի մարդու խնդրեց իրեն օգնել: Մարդը վարձեց նրան, որ կերակրի իր խոզերին:

Ղուկաս ԺԵ.14-15



Որդին այնքան սոված էր, որ ուզեց ուտել խոզերի ուտելիքը: Նա գիտեր, որ իր հոր տան ծառաները ավելի լավ ուտելիք ունեին, քան նա:

Ղուկաս ԺԵ.16-17



Նա որոշեց ապաշխարել և խնդրել իր հորը ծառա լինել նրա տանը: Երբ որդին գնաց տուն, նրա հայրը տեսավ նրան:

Ղուկաս ԺԵ.18-20



Հայրը վազեց նրան դիմավորելու: Նա գրկեց ու համբուրեց նրան:

Ղուկաս ԺԵ.20



Որդին հորն ասաց, որ մեղքեր է գործել: Նա զգում էր,
որ արժանի չէր կոչվել իր հոր որդին:

Դուկաս ԺԵ.21



Հայրը ծառային պատվիրեց, որ բերի ամենալավ հագուստը և հագցնի որդուն: Ծառան կոշիկ հագցրեց որդու ոտքերին և մատանի դրեց նրա մատին:

Ղուկաս ԺԵ.22



Հայրը ծառային ասաց, որ խնջույք պատրաստի: Նա ուզում էր, որ բոլորը տոնեին: Մեղավոր որդին սպաշխարել էր և վերադարձել տուն:

Ղուկաս ԺԵ.23-24



Ավագ որդին աշխատում էր դաշտում: Երբ նա եկավ տուն, լսեց երաժշտություն և պար: Ծառան նրան ասաց, որ նրա փոքր եղբայրը տուն էր եկել: Նրա հայրը ուզում էր, որ բոլորը տոնեին դա:

Ղուկաս ԺԵ.25-27



Ավագ եղբայրը բարկացավ և չգնաց տուն: Նրա հայրը դուրս եկավ և խոսեց նրա հետ:

Ղուկաս ԺԵ.28



Հայրը շնորհակալ էր, որ ավագ եղբայրը միշտ իր հետ էր: Այն ամենը, ինչ հայրն ուներ, նրանն էր: Հայրը

նաև ասաց, որ տոնելը ճիշտ էր: Նա ուրախ էր, որ փոքր որդին ապաշխարել էր և տուն վերադարձել:

Դուկաս ԺԵ.31-32



Հիսուսը պատմեց փարիսեցիներին երեք առակները, որովհետև նա ուզում էր, որ նրանք իմանային, թե որքան շատ է Երկնային Հայրը սիրում ամեն մեկին: Նա սիրում է մարդկանց, որոնք հնազանդվում են Իրեն: Նա սիրում է նաև մեղավորներին, բայց

Երկնային Հայրը չի կարող օրհնել նրանց, մինչև որ նրանք չապաշխարեն: Նա ուզում է, որ մեղավորները ապաշխարեն և վերադառնան Իր մոտ: Եվ Նա ուզում է, որ մենք օգնենք նրանց անել դա և ուրախանալ, երբ նրանք վերադառնան:

Հովհաննես Գ.16-17



Գ Լ Ո Ւ Խ 37

Տաս բորոտները



Հիսուսը գնաց մի փոքր քաղաք, որտեղ հանդիպեց տաս բորոտների: Բորոտները մարդիկ են, որոնք հիվանդ են: Հիվանդության պատճառով նրանց մարմնի վրա խորը վերքեր են առաջանում:

Ղուկաս ԺԷ.12



Բժիշկները չէին կարող օգնել բորոտներին: Մարդիկ վախենում էին մոտ գնալ նրանց: Նրանք չէին ուզում նույնպես հիվանդանալ:

Ղուկաս ԺԷ.12



Բորոտները Հիսուսին խնդրեցին բուժել իրենց: Նրանք գիտեին, որ Նա կարող էր բուժել իրենց վերքերը:

Ղուկաս ԺԷ.13



Հիտուար ուզում էր, որ նրանք ապաքինվեին: Նա նրանց ասաց, որ գնան և իրենց ցույց տան քահանաներին:

Ղովկաս ԺԷ.14



Քահանաների մոտ գնալու ճանապարհին տասս բորոտները բուժվեցին: Նրանց վերքերը վերացել էին:

Ղովկաս ԺԷ.14



Բորոտներից մեկը գիտեր, որ իրենց բուժեց Հիտուար: Նա վերադարձավ և շնորհակալություն հայտնեց Նրան: Հիտուար հարցրեց, թե ուր են մնացած ինը

բորոտները: Նրանք չվերադարձան: Հիտուան ասաց այն բորոտին, որը շնորհակալություն հայտնեց, որ հավատքը բուժեց իրեն:

Ղովկաս ԺԷ.15-19



Գ Լ Ո Ւ Խ 3 8

Փարիսեցին և մաքսավորը



Մի օր Փրկիչը խոսում էր որոշ մարդկանց հետ, որոնք մտածում էին, թե մյուսներից ավելի արդար էին: Հիսուսը նրանց մի պատմություն պատմեց:

Ղուկաս ԺԸ.9



Երկու տղամարդ զնացին տաճար աղոթելու: Մեկը փարիսեցի էր: Մյուսը՝ մաքսավոր, որ նշանակում է՝ հարկ հավաքող: Մարդիկ չէին սիրում հարկ

հավաքողներին: Նրանք հարկ հավաքողներին համարում էին ոչ ազնիվ:

Ղուկաս ԺԸ.10



Փարիսեցին կանգնեց բոլորից առաջ, որպեսզի աղոթեր: Նա շնորհակալություն հայտնեց Աստծուն նրա համար, որ ինքն ավելի լավն էր, քան մյուս մարդիկ: Նա ասաց, որ ծով էր պահել շաբաթը երկու

անգամ և վճարել էր իր տասանորդը: Մաքսավորը առանձին կանգնեց, կախեց գլուխը և աղոթեց. «Ով Աստված, ողորմիր ինձ, մեղավորիս»:

Դուկաս ԺԸ.11-13



Փարիսեցիները կարծում էր, թե կատարյալ էր և Աստծո օգնության կարիքը չունեին: Իսկ մաքսավորը գիտեր,

որ կատարյալ չէր և ուներ Աստծո օգնության կարիքը: Նա խոնարհ էր և խնդրում էր Աստծուն ներել իրեն:

Դուկաս ԺԸ.14



Հիտունն ասաց, որ մարդիկ պետք է նմանվեն մաքսավորին: Նրանք չպետք է մտածեն, թե սյուաներից


ավելի լավն են: Նրանք պետք է ապաշխարեն իրենց մեղքերից և խնդրեն Աստծուն ներել իրենց:

Դուկաս ԺԸ.14



Գ Լ Ո Ւ Խ 39

Հիսուսը բուժում է կույրին



Մի օր Հիսուսը գրոսնում էր Իր աշակերտների հետ: Նրանք տեսան մի մարդու, որն ի ծնե կույր էր: Աշակերտները հարցրեցին, թե ինչու էր այդ մարդը կույրացել՝ որովհետև մեղք էր գործել, թե՞ որովհետև իր ծնողներն էին մեղք գործել:

Հովհաննես Թ. 1-2



Փրկիչն ասաց, որ ոչ ծնողները, ոչ էլ ինքն էին մեղք գործել: Մարդը կույր էր, որպեսզի Հիսուսը բուժեր նրան և ցույց տար Աստծո զորությունը:

Հովհաննես Թ. 3-5



Հիսուսը ցեխից մի գունդ արեց: Նա դրեց այն կույր մարդու աչքերին: Հիսուսը մարդուն ասաց, որ զնա և վանա իր աչքերը:

Հովհաննես Թ. 6-7



Երբ մարդը լվաց ցեխը աչքերից, նա կարողացավ տեսնել:

Հովհաննես Թ. 7




Երբ նրա հարևանները տեսան նրան, նրանք չճանաչեցին նրան: Նա նրանց ասաց, որ Հիսուսը բուժեց իրեն: Հարևանները մարդուն տարան փարիսեցիների մոտ: Մարդը փարիսեցիներին ասաց, որ Հիսուսը բուժեց իրեն:

Հովհաննես Թ. 8-11



Փարիսեցիներից ոմանք մտածեցին, որ Հիսուսը պետք է որ արդար մարդ լիներ: Սյուսները կարծում էին, որ նա մեղավոր էր: Երբ մարդն ասաց, որ Հիսուսը արդար էր, որոշ փարիսեցիներ բարկացան և դուրս վռնդեցին նրան:

Հովհաննես Թ. 13-16, 30-34




Հիսուսը գտավ այդ մարդուն: Նա հարցրեց նրան, թե արդյոք նա հավատում էր Աստծո Որդուն: Մարդը հարցրեց, թե ով էր Աստծո Որդին: Հիսուսն ասաց, որ Ինքն էր Աստծո Որդին, և մարդը երկրպագեց Նրան:

Հովհաննես Թ. 35-38




Գ Լ Ո Ւ Խ 40

Բարի հովիվը



Հովիվը հոգ է տանում ոչխարների համար: Նա օգնում է նրանց ուտելիք և ջուր գտնել: Նա թույլ չի տալիս, որ նրանք վնասվեն կամ կորեն: Նա ճանաչում և սիրում է նրանց, և կարող է իր կյանքը տալ նրանց փրկելու համար:

Հովհաննես Ժ.11-15



Հիտուս Քրիստոսն Իրեն Բարի Հովիվ էր անվանում: Նա մեր հովիվն է: Մենք Նրա ոչխարներն ենք: Նա սիրում է մեզ: Նա օգնում է մեզ սովորել ճշմարտությունը: Նա սովորեցնում է մեզ, ինչպես պետք է ապրել, որպեսզի կարողանանք վերադառնալ Երկնային Հոր մոտ: Նա տվեց Իր կյանքը մեզ համար:

Հովհաննես Ժ.11-15



Փրկիչը Երուսաղեմի մարդկանց ասաց, որ ունի այլ ոչխարներ ևս: Նա ասաց, որ կապցելի այդ մյուս ոչխարներին: Մարդիկ չհասկացան:

Հովհաննես Ժ.16; 3 Նևիի 15.21-22, 24



Հարություն առնելուց հետո Հիսուսը այցելեց Իր ոչխարներին Ամերիկաներում: Մորմոնի Գիրքը պատմում է Նրա այդ այցելության մասին: Հիսուսը շատ օրեր մնաց այնտեղ, բուժելով հիվանդներին և

օրհնելով մարդկանց: Նա նրանց քահանայություն տվեց և հիմնեց Իր Եկեղեցին: Հիսուսն այդ մարդկանց սովորեցրեց նույն բաները, ինչ սովորեցնում էր Երուսաղեմի մարդկանց:

3 Նևֆի 11-28



Գ Լ Ո Ւ Խ 4 1

Հիսուսը օրհնում է երեխաներին



Հիսուսը գնում էր Երուսաղեմ: ճանապարհին որոշ մարդիկ ցանկացան, որ Հիսուսը օրհներ իրենց երեխաներին: Աշակերտները այդ մարդկանց ասացին, որ չանհանգստացնեն Հիսուսին:

Մարկոս Ժ.13



Բայց Հիսուսը սիրում էր երեխաներին: Նա ասաց աշակերտներին, որ թույլ տային երեխաներին գալ Իր մոտ: Հիսուսը աշակերտներին նաև ասաց, որ նրանք

պետք է նմանվեն երեխաներին: Այդ ժամանակ նրանք կկարողանային ապրել երկնքում Աստծո հետ:

Մարկոս Ժ.14-15



Գ Լ Ո Ւ Խ 42

Հարուստ երիտասարդը



Մի օր մի հարուստ երիտասարդ տղամարդ մոտեցավ Հիսուսին և հարցրեց Նրան, թե ինչ պետք է անի երկինք գնալու համար:

Մարկոս Ժ.17



Փրկիչը նրան ասաց, որ նա պետք է սիրի և պատվի իր հորը և մորը, չսպանի, չխաբի և չգողանա: Հարուստ երիտասարդն ասաց, որ նա միշտ կատարել է այդ պատվիրանները:

Մարկոս Ժ.19-20



Հիսուսը երիտասարդին ասաց, որ նա պետք է անի մեկ բան ևս: Նա պետք է վաճառեր իր ողջ ունեցվածքը և փողը տար աղքատներին: Այնուհետև երիտասարդը պետք է հետևեր Իրեն:

Մարկոս Ժ.21



Հարուստ երիտասարդը չէր ուզում տալ այն ամենը, ինչ ուներ: Նա իր ունեցած իրերը Աստծուց շատ էր սիրում: Երիտասարդ տղամարդը տխուր հեռացավ:

Մարկոս Ժ.22



Փրկիչն Իր աշակերտներին ասաց, որ նրանց համար, ովքեր հարստություն են սիրում, դժվար կլինի գնալ երկինք: Աշակերտները չէին հասկանում: Նրանք հարցրեցին, թե ով կարող է ապրել Աստծո

հետ: Հիսուսն ասաց, որ մարդիկ, որոնք վստահում են Աստծուն և սիրում են Նրան ավելի, քան մնացած բաները, կարող են ապրել Նրա հետ երկնքում:

Մարկոս Ժ.23-30 (տես ծանոցում 27Ա)



Գ Լ Ո Ւ Խ 43

Հիսուսը Կենդանացնում Է Ղազարոսին



Ղազարոս անունով մի մարդ իր քույրերի՝ Մարիամի և Մարթայի հետ ապրում էր Բեթանիայում: Հիսուսը սիրում էր Ղազարոսին և նրա քույրերին, իսկ նրանք սիրում էին Հիսուսին:

Հովհաննես ԺԱ. 1-2,5



Ղազարոսը ծանր հիվանդացավ: Փրկիչը մեկ այլ քաղաքում էր: Մարիամը և Մարթան Նրան լուր ուղարկեցին Ղազարոսի հիվանդության մասին:

Հովհաննես ԺԱ.3



Փրկիչն Իր աշակերտներին խնդրեց Իր հետ գնալ Ղազարոսին օգնելու: Աշակերտները վախեցան գնալ Բեթանիա: Այն Երուսաղեմին մոտ էր: Երուսաղեմում կային մարդիկ, որոնք ուզում էին սպանել Հիսուսին:

Հովհաննես ԺԱ. 6-8, 18



Հիտուն Իր աշակերտներին ասաց, որ Ղազարոսը մահացել է: Նա ասաց, որ կկենդանացնի նրան: Այդ հրաշքը պետք է օգներ աշակերտներին իմանալ, որ Նա Փրկիչն էր: Հիտուրը գնաց Բեթանիա: Երբ Նա հասավ այնտեղ, Ղազարոսը չորս օր արդեն մահացած էր:

Հովհաննես ԺԱ. 11–17, 19



Մարթան Հիտուսին ասաց, որ Ղազարոսը կենդանի կլիներ, եթե Նա ավելի շուտ գար: Հիտուն ասաց, որ Ղազարոսը նորից կապրի: Նա հարցրեց, թե արդյոք Մարթան հավատում էր Իրեն: Մարթան ասաց, որ հավատում է: Նա գիտեր, որ Հիտուրը Փրկիչն էր:

Հովհաննես ԺԱ. 20-27



Մարթան թողեց Հիտուսին և գնաց գտնելու իր քրոջը՝ Մարիամին: Մարիամը նույնպես եկավ տեսնելու Հիտուսին: Շատ մարդիկ հետևեցին նրան: Մարիամը

լաց լինելով ծնկի իջավ Փրկչի ոտքերի մոտ: Նրա հետ գտնվող մարդիկ նույնպես լաց էին լինում: Հիտուրը հարցրեց, թե որտեղ էր Ղազարոսի մարմինը:

Հովհաննես ԺԱ. 28-34



Հիսուսը գնաց քարանձավ, որտեղ թաղված էր Ղազարոսը: Քարանձավի առաջ քար կար: Նա ասաց մարդկանց, որ տեղափոխեն քարը:

Հովհաննես ԺԱ.38-39



Հիսուսը նայեց վեր: Նա շնորհակալություն հայտնեց Երկնային Հորը Իր աղոթքները լսելու համար:

Հովհաննես ԺԱ.41-42



Ապա, բարձր ձայնով, Հիսուսը Ղազարոսին ասաց, որ վեր կենա և դուրս գա քարանձավից: Ղազարոսը դուրս


եկավ: Շատ մարդիկ, ովքեր տեսան հրաշքը, սկսեցին հավատալ, որ Հիսուսը Փրկիչն էր:

Հովհաննես ԺԱ.43-45



Ք Լ Ո Ւ Խ 44

Փրկիչը գնում է Երուսաղեմ




Որոշ մարդիկ ասացին քահանաներին և փարիսեցիներին, որ Հիսուսը կենդանացրեց Ղազարուսին: Փարիսեցիները մտածեցին, որ այժմ բոլորը կհավատան Հիսուսին: Նրանք վախեցան, որ ոչ ոք այլևս չի լսի իրենց:

Հովհաննես ԺԱ. 46-48



Փարիսեցիները Հիսուսին սպանելու ծրագիր կազմեցին: Նրանք սպասում էին, որ Նա զար Երուսաղեմ Զատկի տոնակատարությանը:

Հովհաննես ԺԱ. 49-51, 55-57



Հիսուսը գնաց Երուսաղեմ: Շատ մարդիկ լսեցին, որ Նա գալիս էր, և դուրս էին եկել Նրան դիմավորելու: Հիսուսը քաղաք մտավ ավանակի վրա նստած: Մի մարգարե գրել էր, որ Աստծո Որդին այդպես էր անելու: Շատ մարդիկ հավատացին, որ Հիսուսը

Աստծո Որդին էր: Նրանք գետնին փռեցին արմավենու ճյուղեր և շորեր, որպեսզի Նա անցնելը դրանց վրայով: Նրանք գոչեցին օվսաննա և հայտարարեցին, որ Հիսուսը իրենց թագավորն էր:

Զարարիս Թ.9; Մատթեոս ԻԱ.4-9; Հովհաննես ԺԱ.12-15



Երուսաղեմի մարդիկ եկել էին տեսնելու, թե ինչ էր տեղի ունենում: Նրանք հարցնում էին, թե ով էր Հիսուսը: Ամբոխի մեջ գտնվող մարդիկ ասացին, որ Նա մարգարե էր Նազարեթից:

Մատթևոս ԻԱ.10-11



Փարիսեցիները բարկացած էին: Նրանք չէին ուզում, որ մարդիկ հավատային, որ Հիսուսը Փրկիչն էր: Հիսուսը գիտեր, որ փարիսեցիները ուզում էին սպանել Իրեն:

Հովհաննես ԺԱ.53; 12:19, 23



Հիսուսը Իր աշակերտներին ասաց, որ շուտով մահանալու է: Նա պետք է տանջվեր բոլոր մարդկանց մեղքերի համար և հետո մահանար

խաչի վրա: Նա աշխարհի Փրկիչն էր: Այդ պատճառով էր Նա եկել երկիր:

Հովհաննես ԺԲ.23-25, 27, 32-33, 47




Գ Լ Ո Ւ Խ 45

Այրի կնոջ լումաները



Հիսուսը գնաց տաճար Երուսաղեմում Նա նայում էր, թե ինչպես էին մարդիկ փող տալիս եկեղեցում: Շատ հարուստներ շատ փող տվեցին:

Մարկոս ԺԲ.41



Մի աղքատ այրի կին երկու լումա տվեց: Դա շատ մեծ փող չէր, սակայն այն ամենն էր, ինչ նա ուներ:

Մարկոս ԺԲ.42, 44



Հիտուար տեսավ այրի կնոջը և ասաց աշակերտներին, թե ինչ այդ կինն արեց:

Մարկոս ԺԲ.43



Նա ասաց, որ հարուստները ավելի շատ փող տվեցին, քան այդ կինը, բայց նրանք ավելի շատ փող ունեին տալու:

Մարկոս ԺԲ.41-44



Այրին էլ փող չունեք: Նա տվեց այն, ինչ ունեք: Նա ավելի շատ տվեց Աստծուն, քան բոլոր հարուստ մարդիկ:

Մարկոս ԺԲ.44



Գ Լ Ո Ւ Խ 46

Երկրորդ Գալուստը



Հիսուսը Չիթենյաց Սարի վրա էր: Նրա աշակերտները հարցեր ունեին Նրան տալու: Նրանք հարցրեցին, թե երբ էին ոչնչանալու ամբարիշտները: Նրանք նաև ուզում էին իմանալ, թե երբ էր Հիսուսը նորից գալու:

Մատթեոս ԻԴ.3; Ջոզեֆ Սմիթ - Մատթեոս 1.4



Հիսուսը նրանց ասաց, որ Իր Երկրորդ Գալստից առաջ կեղծ մարգարեներ կլինեն, որոնք կհայտարարեն, թե իրենք Քրիստոսն են: Շատ մարդիկ կհետևեն նրանց:

Բայց եթե Նրա հետևորդները հնազանդվեն Իր խոսքերին, ապա կեղծ մարգարեների չեն կարողանա խաբել իրենց: Նրանք կփրկվեն:

*Մատթեոս ԻԴ.4-5, 24-27; Մարկոս ԺԳ.21-22;
Ջոզեֆ Սմիթ - Մատթեոս 1.21-22,37*



Հիտուար նաս ասաց, որ Իր երկրորդ գալստից առաջ կլինեն շատ պատերազմներ, սով, սաստիկ

հիվանդություններ և երկրաշարժեր: Շատ մարդիկ այլևս չեն օգնի մյուսներին և կդառնան ամբարիշտ:

*Վարդապետություն և Ուխտեր 45.16, 26–27, 31–32;
Զոզնեֆ Սմիթ - Մատթեոս 1.23, 28-30*



Ավետարանը կքարոզվի ողջ աշխարհում, սակայն շատ մարդիկ չեն լսի:

*Վարդապետություն և Ուխտեր 45.28–29;
Զոզնեֆ Սմիթ - Մատթեոս 1.31*



Արևը կխավարի, լուսինը չի փայլի և աստղերը կընկնեն երկնքից:

*Մատթեոս ԻԴ.29; Մարկոս ԺԳ.24-25;
Զոզնեֆ Սմիթ - Մատթեոս 1.33*



Երբ Հիսուս Քրիստոսը կրկին գա, մարդիկ կտեսնեն, ինչպես է Նա իջնում ամպերից գործությամբ և փառքով:

Նա կուղարկի Իր հրեշտակներին, որոնք բոլոր արդարներին կհավաքեն:

Մատթեոս ԻԳ.30-31; Մարկոս ԺԳ.26-27; Զոզեֆ Սմիթ - Մատթեոս 1.36-37



Մենք կարող ենք պատրաստվել Երկրորդ Գալստին, կատարելով ճիշտը: Երբ մենք տեսնենք այն նշանները, որոնք խոստացավ Հիսուսը, մենք կհիմանանք, որ

Փրկիչը շուտով գալու է: Ոչ ոք ճշգրիտ չգիտի, թե երբ Հիսուսը նորից կգա: Եթե մենք պատրաստ լինենք, մենք կարող ենք Նրա հետ լինել:

Մատթեոս ԻԳ.44; Դուկաս ԻԱ.36; Զոզեֆ Սմիթ - Մատթեոս 1. 39-40



Գ Լ Ո Ւ Խ 47

Տաս կույսերը



Հիտուար պատմեց տաս երիտասարդ կանանց մասին, որոք գնացին հարսանիք: Նրանք սպասում էին, որ փեսացուն գար և ներս թողներ իրենց: Նրանք չգիտեին, թե որ ժամին էր նա գալու:

Մատթևոս ԻԵ.1,13



Տաս կանայք յուղով վառվող լամպեր ունեին: Կանանցից հինգը իմաստուն էին: Նրանք լրացուցիչ յուղ էին բերել իրենց հետ:

Մատթևոս ԻԵ.2,4



Մնացած հինգ կանայք հիմար էին: Նրանք միայն իրենց լամպերի մեջ յուղ ունեին:


Մատթևոս ԻԵ.3



Փեսացուն երկար ժամանակ չեկավ: Լամպերի յուղը վերջացավ: Հինգ իմաստուն կանայք լրացուցիչ յուղ

ունեին իրենց լամպերի մեջ լցնելու համար: Հինգ հիմար կանայք ստիպված էին գնալ և յուղ գնել:

Մատթևոս ԲԵ.5-9




Երբ Նրանք գնացին, եկավ փեսացուն: Նա թույլ տվեց հինգ իմաստուն կանանց գնալ հարսանիք:

Մատթևոս ԲԵ.10



Երբ հինգ հիմար կանայք վերադարձան, դուռը փակ էր: Նրանք չկարողացան գնալ հարսանիք:

Մատթևոս ԲԵ.10-12



Հիտուր նման է այս պատմության փեսացուին:
Եկեղեցու անդամները նման են տաս կույսերին: Երբ
Հիտուր նորից գա, որոշ անդամներ պատրաստ
կլինեն: Նրանք հնազանդված կլինեն Աստծո

պատվիրաններին: Մյուսները պատրաստ չեն լինի:
Նրանք չեն կարողանա Փրկչի հետ լինել, երբ Նա
նորից գա:

*Մատթեոս ԻԵ. 13; Վարդապետություն և Ուխտեր 45.56-57; 88.86, 92;
Հիսուս Քրիստոսը 576-80*



Գ Լ Ո Ւ Խ 48

Տաղանդները



Հիտուար Իր աշակերտներին մի պատմություն պատմեց մի մարդու մասին, որն իր ծառաներին տաղանդներ տվեց: Տաղանդը մեծ քանակությամբ փող էր:

Մատթևոս ԻԵ.14–15



Այդ մարդը մի ծառային տվեց հինգ տաղանդ: Մյուսին նա տվեց երկու տաղանդ: Երրորդ ծառային նա տվեց մեկ տաղանդ: Այնուհետև այդ մարդը մեկնեց ճանապարհորդության:

Մատթևոս ԻԵ.15



Հինգ տաղանդ ունեցող ծառան շատ աշխատեց: Նա վաստակեց ևս հինգ տաղանդ: Այժմ նա ուներ տասն տաղանդ:

Մատթևոս ԻԵ.16



Երկու տաղանդ ունեցող ծառան նույնպես շատ աշխատեց: Նա վաստակեց ևս երկու տաղանդ: Այժմ նա ունի չորս տաղանդ:

Մատթևոս ԻԵ.17



Մեկ տաղանդ ունեցող ծառան թաղեց այն հողի մեջ: Նա վախենում էր, որ կկորցնի այն: Նա չաշխատեց, որ ավելի շատ տաղանդ վաստակեր:

Մատթևոս ԻԵ.18



Երբ մարդը վերադարձավ, նա հարցրեց ծառաներին, թե ինչ էին նրանք արել իրենց տաղանդների հետ:

Մատթևոս ԻԵ.19



Առաջին ծառան նրան բերեց տաս տաղանդ: Մարդը երջանիկ էր: Նա այդ ծառային ղեկավար նշանակեց շատ բաների վրա և ասաց, որ նա ուրախ լինի:

Մատթևոս ԻԵ.20-21



Երկրորդ ծառան մարդուն բերեց չորս տաղանդ:
Սա նույնպես մարդուն ուրախացրեց: Նա երկրորդ

ծառային ղեկավար նշանակեց շատ բաների վրա և
ասաց, որ նա ուրախ լինի:

Մատթևոս ԻԵ.22-23



Երրորդ ծառան մարդուն վերադարձրեց այն
տաղանդը, որը թաղել էր: Մարդը ուրախ չէր: Նա
ասաց, որ այդ ծառան ծուլ էր: Նա պետք է շատ
աշխատեր, որ ավելի շատ տաղանդ վաստակեր:

Մատթևոս ԻԵ.24-27



Մարդը վերցրեց տաղանդը երրորդ ծառայից և տվեց
այն առաջին ծառային: Ապա նա ծուլ ծառային բաց
թողեց: Պատմության մեջ մարդը նման է Հիսուսին:
Մենք նման ենք ծառաներին: Հիսուսը կղատի
մեզանից յուրաքանչյուրին նրա համար, թե ինչպես
ենք մենք օգտագործել մեզ տրված պարգևները:

Մատթևոս ԻԵ.28-30



Գ Լ Ո Ւ Խ 49

Առաջին Հաղորդությունը



Ամեն տարի հրաները տոն ունենին, որը կոչվում էր Զատիկ: Այն օգնում էր հրեաներին հիշել, ինչպես Աստված փրկեց իրենց նախնիներին Մովսեսի ժամանակներում:

Ելից ԺԲ.27; Ղուկաս ԻԲ.7



Հիսուսը և Տասներկու Առաքյալները պետք է տեղ գտնեին, որտեղ պետք է Զատիկի ճաշը ուտեին: Փրկիչը ուղարկեց Պետրոսին և Հովհաննեսին, որ սենյակ

գտնեին և հետևեին, որ ամեն ինչ պատրաստ է ճաշելու համար:

Ղուկաս ԻԲ.8



Նրանք սենյակ գտան և պատրաստվեցին ճաշին:

Դուկաս ԻԲ.9-13



Հիսուսը և բոլոր Առաքյալները զնացին այնտեղ:
Նրանք միասին կերան Ջատկի ճաշը:

Դուկաս ԻԲ.14



Հիսուսը Իր Առաքյալներին առաջին անգամ հաղորդություն մատուցեց: Նա վերցրեց հացը, օրհնեց այն և բաժանեց այն կտորների: Նա ասաց Առաքյալներին, որ ուտեն հացը:

Դուկաս ԻԲ.26; Դուկաս ԻԲ.19




Հիսուսը նրանց խնդրեց, որ հացը ուտելիս մտածեն Իր մարմնի մասին: Նա խնդրեց նրանց հիշել, որ Նա մահանալու էր իրենց համար:

Մատթեոս ԻԲ.26; Դուկաս ԻԲ.19



Հիտուար գինի լցրեց բաժակի մեջ: Նա օրհնեց գինին և ասաց Առաքյալներին, որ խմեն այն:

Մատթևոս ԻԶ.27



Հիտուար նրանց ասաց, որ խմելիս նրանք մտածեն Իր արյան մասին: Նա նրանց խնդրեց հիշել, որ Նա արյունահոսելու է և տանջվելու է բոլոր մարդկանց մեղքերի համար:

Մատթևոս ԻԶ.28; Դուկաս ԻԲ.20



Հիտուար Առաքյալներին ասաց, որ ամբարիշտ մարդիկ շուտով կապանեն Իրեն: Առաքյալներից տասնմեկը շատ տխուր էին: Նրանք սիրում էին Փրկչին և չէին ուզում, որ Նա մահանար: Հիտուար


գիտեր, որ Առաքյալներից մեկը պետք է օգնի ամբարիշտ մարդկանց: Նրա անունը Հուդա Իսկարիովտացի էր:

Մատթևոս ԻԶ. 2, 14–16, 21–25



Գ Լ Ո Ւ Խ 5 0

Վերջին Ընթրիքի Ժամանակ տրված այլ ուսմունքներ



Երբ նրանք ավարտեցին ուտելը, Հիսուսը Իր Առաքյալներին ասաց, որ նրանք պետք է սիրեն միմյանց, ինչպես Նա էր սիրում նրանց: Եթե նրանք անեին դա, մարդիկ կիմանային, որ նրանք Նրա աշակերտներն էին:

Հովհաննես ԺԳ. 34-35



Նա ասաց, որ եթե Առաքյալները սիրում են Իրեն, ապա կպահեն Իր պատվիրանները: Նա խոստացավ նրանց Սուրբ Հոգու պարգևը: Սուրբ Հոգին պետք է

ուսուցաներ նրանց այն ամենը, ինչի կարիքը նրանք ունեին: Սուրբ Հոգին կօգներ Առաքյալներին հիշել այն, ինչ Հիսուսը նրանց սովորեցնում էր:

Հովհաննես ԺԳ. 15-18, 26



Հիտունն ասաց, որ Ինքը նման է խաղողի որթի: Իր աշակերտները նման են որթի ճյուղերին: Միայն այն ճյուղը, որն ամուր կպած է որթին, կարող է պտուղ տալ:

Հովհաննես ԺԵ. 1-2,5



Հիտուր Իր Առաքյալներին խոստացավ, որ եթե նրանք ապրեին ըստ ավետարանի, ապա նրանց պտուղները (նրանց գործերը) բարի կլինեն: Եթե նրանք չհետենին Նրան, նրանք կնմանվեն բույսից պոկված ճյուղերին և ոչինչ չեն տա:

Հովհաննես ԺԵ. 3-8



Հիտուս Քրիստոսը աղոթեց, որ Իր Առաքյալները միավորված լինեն: Նա ուզում էր, որ նրանք ուսուցանեին մարդկանց հավատալ Իրեն և իմանալ, որ Երկնային Հայրը սիրում է իրենց:

Հովհաննես ԺԵ. 1-4, 6, 11, 20-23



Այնուհետև Հիտուր և Առաքյալները օրհներգ երգեցին և դուրս եկան սենյակից:

Մատթեոս ԻԶ.30



Գ Լ Ո Ւ Խ 51

Հիսուսը տանջվում է Գեթսեմանի Այգում




Հիսուսը և Առաքյալները գնացին Գեթսեմանի Այգի: Հուդան չգնաց նրանց հետ: Նա գնաց և հրեա ղեկավարներին ասաց, թե որտեղ է Հիսուսը:

Մատթևոս ԻԶ.36; Մարկոս ԺԴ.43; Հովհաննես ԺԸ.2-3



Փրկիչը խնդրեց Պետրոսին, Հակոբոսին և Հովհաննեսին Իր հետ գնալ այգի: Նա նրանց խնդրեց սպասել, մինչև Ինքը կաղոթեր:

Մատթևոս ԻԶ.36-39; Մարկոս ԺԴ.33-35



Հիտար գիտեր, որ պետք է տանջվեր բոլոր
մարդկանց մեղքերի համար: Նա չէր ուզում տանջվեր,
սակայն նա որոշեց հնազանդվել Երկնային Հորը:

Մատթևոս ԻԶ.39-44



Պետրոսը, Հակոբոսը և Հովհաննեսը քնեցին, երբ Հիսուսը աղոթում էր: Հիսուսը վերադարձավ և տեսավ, որ նրանք քնած էին: Նա նրանց խնդրեց արթոն մնալ:

Մատթեոս ԻԶ.40-41



Նա նորից գնաց աղոթելու: Պետրոսը, Հակոբոսը և Հովհաննեսը ուզում էին արթոն մնալ, բայց շատ հոգնած էին: Նրանք նորից քնեցին: Հիսուսը նորից

եկավ և նրանց քնած տեսավ: Նա գնաց և երրորդ անգամ աղոթեց:

Մատթեոս ԻԶ.42-44



Երբ Հիսուսը աղոթում էր, Նա սկսեց ցնցվել ցավից: Մի հրեշտակ եկավ Նրան ուժ տալու համար: Նա այնքան շատ տանջվեց, որ արյունահոսում էր մարմնի

ծակոտիներից: Նա տանջվում էր մեր բոլոր մեղքերի համար, որպեսզի մենք կարողանանք ներվել, եթե ապաշխարենք:

Ղովկաս ԻԲ. 41-44; Վարդապետություն և Ուխտեր 19.16-19



Հիսուսը արթնացրեց Պետրոսին, Հակոբոսին և Հովհաննեսին: Նա նրանց ասաց, որ Իրեն կմատնեն և

կսպանեն: Հիսուսն ասաց, որ ամբարիշտները գալու են Իրեն բռնելու:

Մատթևոս ԻԶ. 45-46



Գ Լ Ո Ւ Խ 52

Հիսուսի դատը



Հրեաների ղեկավարները մարդկանց ուղարկեցին թրերով և փայտերով Գեթսեմանի Այգի:

Մատթեոս ԻԶ.47



Հուդա Իսկարիոփտացին նրանց հետ էր:
Քահանայապետը վճարել էր Հուդային, որ նա
մարդկանց ցույց տար, թե որտեղ էր Հիսուսը:

Մատթեոս ԻԶ.14-16, 47



Հուդան մարդկանց ցույց տվեց Հիսուսին, համբուրելով Նրան: Մարդիկ տարան Հիսուսին: Նրանք ծաղրեցին և ծեծեցին Նրան: Նրանք տարան Հիսուսին քահանայապետ Կայիափայի մոտ:

Մատթեոս ԻԶ.48-49,57; Ղուկաս ԻԲ.54, 63-65



Հրեա ղեկավարները Հիսուսին հարցեր տվեցին: Նրանք ասացին, որ Նա խախտել է օրենքը, ասելով, որ Աստծո Որդին է: Հիսուսը նրանց ասաց, որ Աստծո Որդին է: Նրանք ասացին, որ Հիսուսը մեղավոր էր և պետք է մահանար:

Ղուկաս ԻԲ.66-71




Հրեա ղեկավարները չունեին Հիսուսին սպանելու իշխանություն: Նրանք Նրան տարան Պոնտացի Պիղատոսի մոտ, որը կարող էր դատապարտել Հիսուսին մահվան: Հրեա ղեկավարները Պիղատոսին ասացին, որ Հիսուսը մարդկանց սովորեցնում էր չինազանդվել Հռոմեական օրենքին:

Ղուկաս ԻԳ.1-2



Պիղատոսը չէր կարծում, թե Հիսուսը ինչ-որ վատ բան էր արել: Պիղատոսը ուզում էր բաց թողնել Հիսուսին: Ամբոխը ուզում էր, որ Հիսուսին խաչեին:

Ղուկաս ԻԳ.14-21



Պիղատոսը միևնույն է ուզում էր բաց թողնել
Հիսուսին: Բայց քահանաները և մարդիկ
շարունակում էին գոչել, որ Հիսուսին խաչելին:

Ղուկաս ԻԳ.22-23



Պիղատոսը վրաց իր ձեռքերը: Նա ասաց, որ
պատասխանատու չէ Հիսուսի մահվան համար:
Մարդիկ ասացին, որ իրենք պատասխանատու


կլինեն Նրա մահվան համար: Պիղատոսը
կարգադրեց իր զինվորներին խաչել Հիսուսին:

Մատթեոս ԻԷ.24-26



Գ Լ Ո Ւ Խ 53

Հիսուսը խաչվում է



Ջինվորները մտրակներով ծեծեցին Հիսուսին Նրանք կարմիր շոր գցեցին Նրա վրա: Նրանք փշերից պսակ սարքեցին և դրեցին Հիսուսի գլխին: Նրանք ծիծաղում և թքում էին Նրա վրա: Նրանք Նրան կոչում էին «Հրեաների Թագավոր»:

Մարկոս ԺԵ.15-20



Շատ մարդիկ հետևեցին զինվորներին, որոնք Հիսուսին տարան մի բլուր՝ Երուսաղեմի մոտ: Նրանք ստիպեցին, որ Նա տաներ Իր խաչը: Նրանք մեխեցին

Նրա ձեռքերը և ոտքերը խաչին և բարձրացրեցին այն: Նրանք խաչեցին նաև երկու այլ տղամարդկանց, որոնք գողեր էին:

Ղուկաս ԻԳ.27,33; Հովհաննես ԺԹ.17-18



Հիտուր աղոթեց: Նա խնդրեց Երկնային Հորը ներել Իրեն խաչող զինվորներին: Նրանք չգիտեին, որ Նա Փրկիչն էր:

Ղովաս ԻԳ.34



Մարիամը, Հիսուսի մայրը, կանգնած էր խաչի մոտ: Այնտեղ էր նաև Հովհաննես Առաքյալը: Հիտուր

Հովհաննեսին ասաց, որ հոգ տանի Իր մոր համար: Հովհաննեսը Հիսուսի մորը տարավ իր տուն:

Հովհաննես ԺԹ.25-27



Խավարը ծածկեց երկիրը: Փրկիչը երկար ժամեր տանջվեց խաչի վրա: Վերջապես Նրա հոգին հեռացավ Նրա մարմնից, և Նա մահացավ:

Մատթևոս ԲԷ. 45, 50



Երբ Նա մահացավ, երկրաշարժ սկսվեց, որը մեծ ժայռերը կտոր-կտոր արեց: Տաճարի վարագույրը երկու մասի ճեղքվեց: Հռոմեացի զինվորները վախեցել էին:

Մատթևոս ԲԷ. 51, 54



Հիսուսի աշակերտներից մեկը իջեցրեց Փրկչի մարմինը խաչի վրայից: Նա այն կտորով փաթաթեց և դրեց գերեզմանի մեջ, որտեղ մարդկանց էին թաղում: Գերեզմանի դռան առաջ մի մեծ քար դրեցին:

Մատթևոս ԲԷ. 57-60



Գ Լ Ո Ւ Խ 5 4

Հիսուսը հարություն է առնում



Մի կին, որին Հիսուսը բուժեց, և որի անունը Մարիամ Մագդաղենացի էր, գնաց գերեզման: Նա զարմացավ, երբ տեսավ, որ քարը տեղափոխված էր: Հիսուսի մարմինը գերեզմանի մեջ չէր:

Հովհաննես Բ. 1-2



Փրկչի մարմինը գերեզմանի մեջ էր մինչև Կիրակի առավոտ: Այնուհետև երկու հրեշտակ եկան և դեն գլորեցին քարը:

Մատթեոս ԻԸ. 1-2 (տես ծանուցում 2ա); Դուկաս ԲԴ. 1-4



Նա շտապեց Պետրոսի և Հովհաննեսի մոտ, որ ասեք, որ ինչ-որ մեկը տարել էր Փրկչի մարմինը: Նա չգիտեր, թե որտեղ էր այն:

Հովհաննես Բ. 2



Պետրոսը և Հովհաննէսը վազեցին դեպի գերեզման: Նրանք գտան Հիսուսի հագուստները, բայց Հիսուսի մարմինը այնտեղ չէր: Պետրոսը և Հովհաննէսը չգիտեին, ինչ անել: Նրանք գնացին տուն:

Հովհաննէս Բ.3-7, 10



Մարիամ Մագդաղենացին լաց լինելով մնաց գերեզմանի մոտ: Երբ նա նորից նայեց, տեսավ երկու հրեշտակ:

Հովհաննէս Բ.11-12



Նրանք Մարիամ Մագդաղենացուն հարցրեցին, թե ինչու էր նա լաց լինում: Նա ասաց, որ ինչ-որ մեկը տարել էր Հիսուսի մարմինը: Նա չգիտեր, թե որտեղ էր այն:

Հովհաննէս Բ.13



Նա շրջվեց և տեսավ ինչ-որ մեկին: Նա մտածեց, թե դա այգեգործն էր: Նա նրան հարցրեց, թե ինչու էր լաց լինում: Նա հարցրեց, թե գիտի՞ Նա արդյոք, թե որտեղ է Հիսուսի մարմինը:

Հովհաննէս Բ.14-15



Այդ ժամանակ մարդն ասաց. «Մարիամ», և նա
հասկացավ, որ դա Հիսուսն էր: Նա նրան խնդրեց
ասել Առաքյալներին, որ Իսրայի հարություն է առել:

Հովհաննես Ի. 15-17




Մարիամ Մագդաղենացին և մի քանի այլ կանայք
Առաքյալներին ասացին, որ Հիսուսը հարություն է
առել: Սկզբում Առաքյալները նրանց չհավատացին:

Ղուկաս ԲԳ. 10-11; Հովհաննես Բ. 18



Ավելի ուշ, երբ Առաքյալները խոսում էին իրար հետ.
Հիսուսը մտավ սենյակ: Առաքյալները վախեցան:
Նրանք դեռ կարծում էին, որ Նա մահացել էր:

Ղուկաս ԲԳ. 36-37



Փրկիչը նրանց ասաց, որ դիպչեն Իր ձեռքերին և ոտքերին: Նրա մարմինը հարություն էր առել և նորից միացել հոգուն:

Ղուկաս ԻԳ.38-40



Առաքյալները երջանիկ էին, որ տեսան Նրան: Նա ուտելիք խնդրեց նրանցից: Նրանք Նրան ձուկ և մեղրամոմ տվեցին: Նա կերավ:

Ղուկաս ԻԳ.41-43



Հիտուս Քրիստոսը առաջին մարդն էր, ով հարություն առավ: Հետագայում շատերը հարություն առան և Երուսաղեմի մարդիկ տեսան նրանց: Հիտուսն ասաց.


«Ես եմ հարությունը և կյանքը»: Քանի որ Նա հաղթեց մահը, մենք նույնպես մի օր հարություն կառնենք:

Մատթեոս ԻԷ.52-53; Հովհաննես ԺԱ.25



Գ Լ Ո Ւ Խ 55

Առաքյալները դեկավարում են Եկեղեցին



Հարություն առնելուց հետո Հիսուսը 40 օր մնաց Իր Առաքյալների հետ: Նա նրանց տարբեր բաներ սովորեցրեց ավետարանի և Իր Եկեղեցու մասին:

Գործք Ա.1-3



Նա նրանց ասաց, որ ուսուցանեն ավետարանը բոլոր մարդկանց: Նա նաև ասաց. Որ շուտով գնալու է, բայց Մուրբ Հոգին կգա և կօգնի նրանց:

Գործք Ա.4-8



Առաքյալները տեսան, ինչպես Հիսուսը բարձրացավ ամպերի մեջ: Երկու հրեշտակ սախտակ շորերով

ասացին Առաքյալներին, որ Հիսուսը մի օր երկնքից կիջնի:

Գործք Ա.9-11



Առաքյալները դարձան երկրի վրա Հիսուս Քրիստոսի Եկեղեցու ղեկավարները: Պետրոսը Նախագահն էր, իսկ Հակոբոսը և Հովհաննեսը նրա խորհրդակալները:

Մատթևոս ԺԶ.18-19; Վարդապետություն և Ուխտեր 81.1-2; Հիսուս Քրիստոս 219-20



Կար միայն տասնմեկ Առաքյալ, Հուդան մահացել էր: Երկնային Հայրը Առաքյալներին ասաց, որ ընտրեին Մատաթիային որպես Տասներկու Առաքյալներից մեկը: Բոլոր Առաքյալները քահանայության հատուկ կոչում ունեին:

Մատթևոս ԻԷ.3-5; Գործք Ա.15-17, 21-26; Վարդապետություն և Ուխտեր 102.8



Առաքյալները և վյուս աշակերտները հավատ ունեին Տիրոջ հանդեպ: Նրանք հնազանդվում էին Նրա պատվիրաններին: Նրանք սիրում էին միմյանց:

Գործք Բ.41-47




Քահանայության և Սուրբ Հոգու զորությամբ Առաքյալները շատ բաներ կարող էին անել: Նրանք բուժում էին հիվանդներին և միսիոներներ էին: Նրանք ուսուցանում էին Հիսուս Քրիստոսի և Նրա ավետարանի մասին: Շատ մարդիկ հավատացին Առաքյալների խոսքերին և միացան Եկեղեցուն: Եկեղեցու անդամները կոչվում էին Սրբեր:

Գործք Բ.2-4, 32-33, 36-43,47; Գ.1-8; Հովմայեցիս Ա.7




Գ Լ Ո Ւ Խ 56

Պետրոսը բուժում է մի մարդու




Մի օր տաճար բերեցին մի մարդու, որը չէր կարողանում քայլել: Նա նստեց տաճարի դռների մոտ և սկսեց փող մուրալ: Մի օր նա տեսավ, ինչպես Պետրոսը և Հովհաննեսը մտան տաճար:

Գործք Գ. 1-3



Նա Պետրոսից և Հովհաննեսից փող ուզեց: Պետրոսն ասաց, որ փող չունի: Պետրոսն ասաց, որ այլ բան կարող է տալ նրան:

Գործք Գ. 3,6



Պետրոսը օրհնեց այդ մարդուն Հիսուս Քրիստոսի անունով և բուժեց նրան: Ապա նա օգնեց մարդուն կանգնել:

Գործք Գ. 6-7



Մարդը իր կյանքում առաջին անգամ քայլեց:
Շատ մարդիկ տեսան, որ նա քայլում էր և ցատկում:
Նրանք գիտեին, որ դա հրաշք էր: Նրանք գիտեին,
որ Պետրոսը Աստծո զորությունն ուներ: Պետրոսը

Նրանց ասաց, որ Հիսուս Քրիստոսը իրենց մարդկանց
բուժելու զորություն է տվել: Պետրոսը մեծ միսիոներ
էր: Նա օգնեց շատ մարդկանց հավատալ և հետևել
Հիսուս Քրիստոսին:

Գործք 9:8-13, 16; 7:4



Գ Լ Ո Ւ Խ 57

Ամբարիշտները սպանում են Ստեփանոսին




Հրեա շատ ղեկավարներ կարծում էին, թե հրաշքները կդադարեին, երբ Հիսուսը մահանար: Սակայն Առաքյալները նույնպես հրաշքներ էին գործում: Շատ մարդիկ հավատացին Հիսուս Քրիստոսին և միացան Եկեղեցուն:

Գործք Դ.1-4, 13-16; Ե.14




Այդ պատճառով Հրեա շատ ղեկավարներ զայրացած էին: Նրանք բանտ գցեցին Պետրոսին և Հովհաննեսին: Հերովդես Ագրիպաս Քազավորը կարգադրեց, որ Հակոբոս Առաքյալին սպանեն:

Գործք Դ.3; ԺԲ.1-2



Առաքյալները կանչեցին յոթ մարդկանց, որ օգնեին ղեկավարել Եկեղեցին: Դրանցից մեկը Ստեփանոս անունով մի արդար մարդ էր: Նա շատ մարդկանց էր ուսուցանել ավետարանը: Կային ամբարիշտ մարդիկ, որոնք ստում էին և ասում, թե Ստեփանոսը Հրեական օրենքի դեմ էր խոսում: Նրան տարան Հրեա ղեկավարների մոտ դատելու:

Գործք Զ.3-12



Ստեփանոսը ղեկավարներին ասաց, որ նրանք ամբարիշտ են: Նա ասաց, որ նրանք սպանեցին Հիսուս Քրիստոսին, Աստծո Որդուն:

Գործք Է.51-54



Այնուհետև Ստեփանոսը նայեց երկինք և տեսավ Երկնային Հորը և Հիսուս Քրիստոսին: Երբ նա ղեկավարներին ասաց, թե ինչ տեսավ, նրանք շատ զայրացան:

Գործք Է.55-56



Նրանք Ստեփանոսին տարան քաղաքից դուրս, որպեսզի սպանեին քարկոծելով: Նրանք իրենց թիկնոցները դրեցին Սավուղ անունով մի երիտասարդի ոտքերի տակ: Մահանալուց

Ստեփանոսը խնդրեց Աստծուն վերցնել իր հոգին երկինք: Նա նաև խնդրեց Աստծուն ներել նրանց, ովքեր սպանում էին իրեն: Նա մահացավ:

Գործք Է.58-60



Գ Լ Ո Ւ Խ 58

Միմոնը և Քահանայությունը



Սամարիայում շատ մարդիկ լսեցին ավետարանը և հավատացին: Նրանք մկրտվեցին, բայց չունեին Սուրբ Հոգին:

Գործք Ը.5, 12–16



Պետրոսը և Հովհաննեսը գնացին Սամարիա: Նրանք իրենց ձեռքերը դնում էին մարդկանց գլխին և տալիս էին նրանց Սուրբ Հոգու պարգևը:

Գործք Ը.14–17



Միմոն անունով մի մարդ տեսավ, ինչպես էին Պետրոսը և Հովհաննէսը մարդկանց Սուրբ Հոգի տալիս: Միմոնը գիտեր, որ այդ երկու Առաքյալները

կարող էին մարդկանց Սուրբ Հոգի տալ, որովհետև ունէին քահանայություն: Նա նույնպես քահանայություն էր ուզում ունենալ:

Գործք Ը.9, 18–19



Նա Պետրոսին և Հովհաննէսին դրա դիմաց փող առաջարկեց: Պետրոսը Միմոնին ասաց, որ ոչ ոք չի կարող գնել քահանայությունը: Աստված տալիս է դա

արդար տղամարդկանց: Պետրոսը գիտեր, որ Միմոնը արդար չէր: Նա նրան ասաց, որ ապաշխարեր:

Գործք Ը.18–24




Գ Լ Ո Ւ Խ 59

Մավուղը սովորում է Հիսուսի մասին



Մավուղը տեսավ, ինչպես մարդիկ սպանեցին Ստեփանոսին: Մի օր Մավուղը իր ընկերների հետ գնում էր Դամասկոս քաղաք: Նա ուզում էր Քրիստոսի մի քանի աշակերտների բանտարկել:

Գործք Է.58; Թ.1-2



Հանկարծ երկնքից մի պայծառ լույս շրջապատեց նրան: Նա ընկավ գետնին: Ապա Մավուղը լսեց Հիսուսի ձայնը, որը նրան հարցրեց, թե ինչու էր նա ուզում մնասել Սրբերին: Մավուղը վախեցավ: Նա


Հիսուսին հարցրեց, թե ինչ պետք է աներ: Փրկիչն ասաց Մավուղին, որ գնա Դամասկոս: Այնտեղ Մավուղին կաավեր, ինչ պետք է անել:

Գործք Է.3-6




Սավուղը բացեց իր աչքերը, սակայն չկարողացավ տեսնել: Նա կոչը էր: Ընկերները նրան տարան Դամասկոս:

Գործք Թ. 8–9



Դամասկոսում ապրում էր Անանիա անունով մի մարդ, որը Հիսուս Քրիստոսի աշակերտն էր: Տեսիլքի միջոցով Հիսուսը Անանիային ասաց, որ գնա Սավուղի մոտ:

Գործք Թ. 10–11



Անանիան քահանայություն ուներ: Նա իր ձեռքերը դրեց Սավուղի գլխին և օրհնեց նրան, որպեսզի վերականգնվեր նրա տեսողությունը: Բուժվելուց հետո Սավուղը մկրտվեց և ստացավ Սուրբ Հոգու պարգևը:

Գործք Թ. 17–18



Սավուղը փոխեց իր անունը Պողոսի: Նա կանչվեց որպես Առաքյալ: Նա դարձավ Եկեղեցու միսիոներ: Նա շատ նամակներ գրեց: Նա գնաց տարբեր երկրներ և ուսուցանեց ավետարանը:

Գործք ԻԶ. 16–23; Հովմայեցիս Ա. 1




Գ Լ Ո Ւ Խ 6 0

Պետրոսը վերա- կենդանացնում է Տաբիթային



Տաբիթա անունով մի բարի կին ապրում էր Յոպպե քաղաքում: Նա Հիսուս Քրիստոսի հետևորդներից էր: Նա շատ մարդկանց էր օգնել և շատ բարի գործեր էր կատարել:

Գործք Թ.36



Նա հիվանդացավ և մահացավ:

Գործք Թ.37



Նրա ընկերները ուղարկեցին Պետրոսի ետևից: Երբ նա եկավ, խնդրեց Տաբիթայի ընկերներին դուրս գալ սենյակից:

Գործք Թ.38-40



Պետրոսը ծնկի իջավ և աղոթեց, ապա ասաց, որ
Տաբիթան կանգնի: Նա բացեց իր աչքերը և նստեց:

Գործք Թ. 40



Պետրոսը նրան օգնեց կանգնել: Նա կանչեց իր
ընկերներին: Նրանք եկան և տեսան, որ կինը ողջ էր:
Պետրոսը օգտագործեց քահանայության զորությունը,

որպեսզի վերակենդանացներ Տաբիթային: Յոպպեյում
շատ մարդիկ հավատացին Հիսուս Քրիստոսին, երբ
լսեցին Տաբիթայի վերակենդանացման մասին:

Գործք Թ. 41–42




Գ Լ Ո Ւ Խ 6 1

Պողոսը և Շիղան քանատում




Երբ Պողոսը և Շիղան անցնում էին, աղջիկը հետևում էր նրանց: Այդ ժամանակ չար ոգին խոսում էր: Մի օր Պողոսը հրամայեց, որ չար հոգին հեռանա նրա միջից: Այն հեռացավ: Այն մարդիկ, որոնց համար աղջիկը աշխատում էր, զայրացան: Այժմ նրանք չէին կարողանում փող աշխատել:

Գործք ԺԶ. 17–19



Մի աղջիկ չար ոգի ուներ իր մեջ: Մարդկանց դուր էր գալիս, թե ինչ էր չար ոգին ասում նրա միջոցով: Նրանք վճարում էին մարդկանց, որոնց մոտ նա աշխատում էր, որպեսզի լսեին, թե ինչ էր ասում ոգին:

Գործք ԺԶ. 16



Մարդիկ Պողոսին և Շիղային տարան իրենց քաղաքի դեկավարների մոտ: Նրանք ասացին, որ Պողոսը և Շիղան անհանգստություններ էին առաջացնում:

Գործք ԺԶ. 19–22



Ղեկավարները կարգադրեցին, որ Պողոսին և Շիղային մտրակով ծեծեին և բանտ գցեին:

Գործք ԺԶ.22–24



Այդ գիշեր Պողոսը և Շիղան աղոթեցին և օրհներգեր երգեցին Երկնային Հորը: Բանտում բոլորը լսեցին

Նրանց: Հանկարծ գետինը սկսեց ցնցվել: Բանտի դռները բացվեցին:

Գործք ԺԶ.25–26



Պահակը արթնացավ և տեսավ բաց դռները:
Նա մտածեց, որ բանտարկյալները փախչել են:
Պողոսը պահակին ասաց, որ չանհանգստանա:


Բանտարկյալները դեռ այնտեղ էին: Պահակը ծնկի
իջավ Պողոսի և Շիղայի կողքին և հարցրեց, թե
ինչպես կարող է փրկվել:

Գործք ԺԶ.27–30



Պողոսը և Շիղան պահակին և նրա ընտանիքին
ուսուցանեցին ավետարանը: Այդ գիշեր պահակը
և նրա ընտանիքը մկրտվեցին:

Գործք ԺԶ.31–33




Հաջորդ օրը քաղաքի ղեկավարները ազատեցին
Պողոսին և Շիղային: Պողոսը և Շիղան գնացին մեկ
սյլ քաղաք շարունակելու իրենց միսիոներական
աշխատանքը:

Գործք ԺԶ.35–40



Գ Լ Ո Ւ Խ 62

Պողոսը հնազանդվում է Սուրբ Հոգուն



Սուրբ Հոգին Պողոս Առաքյալին ասաց, որ գնա Երուսաղեմ: Սուրբ Հոգին ասաց, որ Պողոսին բանտ կգցեն: Պողոսը չվախեցավ: Նա սիրում էր Փրկչին և արեց այնպես, ինչպես իրենց ասաց Սուրբ Հոգին:

Գործք Ի.22–24



Պողոսը հրաժեշտ տվեց իր ընկերներին: Նա ասաց, որ այլևս չի տեսնի իրենց: Նա նրանց ասաց, որ ապրեն ավետարանով և հետևեն Աստծո պատվիրաններին: Պողոսը նրանց զգուշացրեց, որ չսեն մարդկանց, որոնք կփորձեն նրանց ոչ ճիշտ բաներ սովորեցնել:

Գործք Ի.25, 28–32




Պողոսը նրանց ասաց՝ սիրել միմյանց և հոգ տանել իրար համար: Նա ծնկի իջով և աղոթեց նրանց հետ: Բոլորը լաց էին լինում: Նրանք նրա հետ գնացին դեպի Նավակըր և Նայեցին, թե ինչպես Պողոս մեկնեց Երուսաղեմ:

Գործք Ի.35–38




Գ Լ Ո Ւ Խ 63

Պողոսը ավարտում է իր առաքելությունը



Պողոսը Երուսաղեմում գնաց տաճար: Հրեաների մի խումբ մտածեց, թե Պողոսը տաճար էր բերել մարդկանց, ովքեր հրեա չէին: Դա զայրացրեց հրեա մարդկանց: Նրանք հանեցին Պողոսին տաճարից և ձեռնեցին:

Գործք ԻԱ.26–32




Հռոմեացի զինվորները ձերբակալեցին Պողոսին: Նրանք թույլ տվեցին, որ նա խոսեր հրեա մարդկանց հետ: Պողոսը վկայեց մարդկանց, որ տեսել է լույս երկնքից և լսել է Փրկչի ձայնը: Նա ասաց, որ Հիսուսը պատվիրել է իրեն քարոզել ավետարանը:

Գործք ԻԱ.33–40; ԻԲ.1–15




Մարդիկ չհավատացին Պողոսին: Նրանք ուզում էին սպանել նրան: Զինվորները Պողոսին բանտ նստեցրեցին այդ գիշեր:

Գործք ԻԲ.22–30



Փրկիչը այցելեց Պողոսին բանտում և ասաց նրան,
որ չվախենա: Նա ասաց Պողոսին, որ գնա Հռոմ և
այնտեղ քարոզի ավետարանը:

Գործք ԻԳ. 11



Պողոսի ապահովության համար, Հռոմեացիները ուղարկեցին նրան մեկ ուրիշ քաղաք: Ագրիպասա թագավորը այնտեղ էր: Պողոսը Ագրիպասա թագավորին ասաց, որ եղել է Փարիսեցի և ատել է

մարդկանց, որոնք հավատում էին Հիսուսին: Նա նրանց անգամ բանտ էր գցել: Բայց հետո Պողոսը լույս էր տեսել երկնքից և լսել էր Փրկչի ձայնը: Այժմ նա հավատում էր Հիսուսին:

Գործք ԻԳ. 12–35; ԻԵ. 13–23; ԻԶ. 1–15



Պողոսը վկայեց Ագրիպպա թագավորին, որ ավետարանը ճշմարիտ է: Նա ասաց, որ Հիսուսը հարություն է առել: Տեսիլքի միջոցով Հիսուս

Քրիստոսը Պողոսին ասաց, որ ուսուցանի Իր ավետարանը: Քանի որ Պողոսը հնազանդվեց, շատ մարդիկ աստեցին նրան:

Գործք ԻԶ.16–23



Ագրիպպա թագավորը ասաց, որ Պողոսի շնորհիվ նա համարյա թե հավատաց Հիսուսին: Թագավորը չէր կարծում, որ Պողոսը պետք է սպանվեր: Բայց նա

պետք է ուղարկեր Պողոսին Հռոմ, որտեղ Պողոսը պետք է դատվեր:

Գործք ԻԶ.27–32



Հռոմում Պողոսը բանտում մնաց երկու տարի:
Շատ մարդիկ գալիս էին նրան տեսնելու: Նա նրանց
ուսուցանում էր ավետարանը: Պողոսը նամակներ էր

գրում այլ երկրների Սրբերին: Այդ նամակներից մի
քանիսը, որոնք կոչվում էին թղթեր, գտնվում են Նոր
Կտակարանում:

Գործք ԻԸ. 16–31



Պողոսը գիտեր, որ պետք է սպանվեր: Նա
չէր վախենում: Նա հնազանդվում էր Աստծո
պատվիրաններին: Նա ուսուցանում էր
ավետարանը: Նա ավարտել էր իր

առաքելությունը: Պողոսը գիտեր, որ Երկնային
Հայրը սիրում էր իրեն: Նա նաև գիտեր, որ մահից
հետո նա ապրելու էր Երկնային Հոր և Հիսուս
Քրիստոսի հետ:

2 Տիմոթևոս 7. 6–8



Նոր Կտակարանից հետո



Եկեղեցու ղեկավարները շատ էին աշխատում, ուսուցանելով մարդկանց Հիսուս Քրիստոսի մասին: Նրանք այցելում էին Սրբերին և նրանց նամակներ էին գրում: Շատ երկրներում մարդիկ միանում էին Եկեղեցուն: Ամբարիշտ մարդիկ չէին ուզում հավատալ Հիսուս Քրիստոսին:

Գործք 2.2-4, 7; ԺԱ. 19-21



Ամբարիշտ մարդիկ ցանկանում էին փոխել պատվիրանները: Որոշ Սրբեր լսում էին նրանց:

Շատերը այլևս չէին հավատում Հիսուսին և չէին հետևում Նրա պատվիրաններին:

Գաղատացիս Ա.6-8; Տիտոս Ա.10-11; 1 Հովհաննես Բ.18-19



Առաքյալները և Սրբերից շատերը սպանվեցին: Ոչ որ չմնաց, որ ղեկավարեր Եկեղեցին: Քահանայության բանալիները վերցվեցին երկրի վրայից: Մարդիկ չունեին մարգարեներ, որոնք կարող էին առաջնորդել

նրանց: Հիսուս Քրիստոսի Եկեղեցին այլևս գոյություն չունեւ երկրի վրա: Պետրոս և Պողոս Առաքյալները ասում էին, որ այդպես պետք է լիներ:

Մատթեոս ԻԳ.34; ԻԳ.8-10; Հովնայեցեցիս Ը.36; 1 Կորնթոսցիս Դ.9-13; 1 Պետրոս Դ.12; Հիսուս Քրիստոս 745-46



Անցան դարեր: Կային տարբեր եկեղեցիներ: Դրանցից ոչ մեկը չունեւ Առաքյալներ կամ Աստծո քահանայություն: Եկեղեցիներից ոչ մեկը Հիսուս

Քրիստոսի Եկեղեցին չէր: Սակայն մարգարեները ասում էին, որ շատ տարիներ անց Հիսուս Քրիստոսի Եկեղեցին կրկին կվերադառնա երկիր:

Գործք Գ.19-26; 2 Թեսաղոնիկեցիս Բ.1-4; 2 Տիմոթեոս Դ.3-4



1820թ. Ջոզեֆ Սմիթ անունով մի տղա ցանկացավ
իմանալ, թե որն էր Հիսուս Քրիստոսի Եկեղեցին: Նա
գնաց իր տան մոտ գտնվող անտառը և աղոթեց: Նա

խնդրեց Աստծուն իրեն ասել, թե որ եկեղեցին էր
ճշմարիտ:

Ջոզեֆ Սմիթ - Պատմություն 1.3, 5, 10, 14–15



Երկնային Հայրը և Հիսուս Քրիստոսը այցելեցին
Ջոզեֆ Սմիթին: Փրկիչն ասաց, որ Ջոզեֆը չպետք է

միանար ոչ մի եկեղեցու, որովհետև դրանցից ոչ մեկը
Իր Եկեղեցին չէր:

Ջոզեֆ Սմիթ - Պատմություն 1.17–19



Աստված որոշել էր Ջոզեֆ Սմիթի միջոցով ետ բերել Հիսուս Քրիստոսի Եկեղեցին երկիր: Աստված հրեշտակներ ուղարկեց, որ Ջոզեֆ Սմիթին քահանայություն տային: Նա օգնեց Ջոզեֆին թարգմանել Մորմոնի Գիրքը: 1830թ. ապրիլի 6-ին Հիսուս Քրիստոսի Եկեղեցին կրկին կազմակերպվեց երկրի վրա:

Ջոզեֆ Սմիթ - Պատմություն 1.33, 66-75




Ինչպես Հիսուսը ընտրեց Տասներկու Առաքյալներին, երբ երկրի վրա էր, Աստված օգնեց Ջոզեֆ Սմիթին ընտրել Տասներկու Առաքյալներ, որոնք պետք է օգնեին իրենց ղեկավարել Եկեղեցին: Այդ տղամարդկանց տրվեց ավետարանը ուսուցանելու և հրաշքներ գործելու զորություն:

Վարդապետություն և Ուխտեր 102.3; 107.22-23, 35



Հիսուսը ցանկանում է, որ բոլորը իմանան Իր Եկեղեցու մասին: Նա պատվիրեց Ջոզեֆ Սմիթին, որ միսիոներներ ուղարկի, որոնք բոլոր մարդկանց կտվորեցնեին Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու մասին:

Վարդապետություն և Ուխտեր 1.18, 30



Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցին այն նույն եկեղեցին է, որը Հիսուսը հիմնեց, երբ ապրում էր երկրի վրա:

Վարդապետություն և Ուխտեր 115.4

Ծանոթություն բառերին

Առաքյալ ղեկավար Հիսուս Քրիստոսի Եկեղեցում, ով վկայում է Հիսուս Քրիստոսի մասին և ուսուցանում է ավետարանը

Աստծո արքայություն Եկեղեցի կամ վայր, որտեղ արդարները կապրեն Երկնային Հոր հետ այս կյանքից հետո

Երկրորդ Գալուստ երբ Հիսուսը նորից կգա երկիր փրկելու արդար մարդկանց և ոչնչացնելու ամբարիշտներին

Ջատիկ հատուկ տոնակատարություն, երբ հրեա մարդիկ հիշում են, ինչպես Տերը Մովսեսի ժամանակ փրկեց իրենց ժողովրդին եգիպտացիներից

Իմաստուններ մարդիկ, որոնք եկան Արևելքից, որ տեսնեին Հիսուսին, երբ Նա փոքր երեխա էր

Կիրակի շաբաթվա հատուկ օր, երբ մարդիկ երկրպագում են Աստծուն, գնալով եկեղեցի և ավելի շատ սովորելով Նրա մասին

Հրեշտակ երկնային սուրհանդակ Աստծուց

Սուրբ Հիսուս Քրիստոսի ճշմարիտ Եկեղեցու անդամ

Սուրբ Հոգու պարզև իրավունք ունենալու Սուրբ Հոգու օգնությունը, այն սովորում է մարդուն քահանայության իշխանությամբ մեկի կողմից մկրտվելուց հետո

աղոթել խոսել Աստծո հետ, շնորհակալություն հայտնելով Նրան և օրհնություններ խնդրելով
աղոթք այն, ինչ ասում է անձը աղոթելիս
ամբարիշտ նա, ով չար է

այրի կին, որի ամուսինը մահացել է
անապատ տարածք, որտեղ շատ քիչ ջուր, բուսականություն և կենդանի կա

անապատ վայր, որտեղ չկան քաղաքներ և շատ քիչ մարդ է ապրում

անդամ անձ, որը պատկանում է եկեղեցուն կամ մեկ այլ խմբի

աշակերտ մարդ, որը հավատում է Հիսուս Քրիստոսին և փորձում է նմանվել Նրան

ապաշխարել զոջալ արածի մասին և խոստանալ այլևս դա չանել

առակ սկզբունք կամ դաս ուսուցանող պատմություն
ավետարան Հիսուս Քրիստոսի ուսմունքները այն մասին, թե ինչպես պետք է մարդիկ ապրեն, որպեսզի վերադառնան և ապրեն Երկնային Հոր հետ. փրկության ծրագիրը Երկնային Հոր կողմից


արդար հնազանդ Աստծո պատվիրաններին
արտադրել ինչ-որ բան պատրաստել կամ անեցնել

բանտ վայր, որտեղ պահում են օրենքը խախտած մարդկանց

բորոտ հիվանդ մարդ, որն իր մարմնի վրա վերքեր ունի


բուժել լավացնել հիվանդ կամ վիրավորված մարդուն

բորոն հացի ձև



գայթակղել որևէ մեկին փորձել ստիպել սխալ բան անել

գերեզման վայր, որտեղ թաղում են մահացած մարդկանց



գինի խաղողից պատրաստված ըմպելիք

գող մարդ, որը գողանում է ուրիշներից

գողանալ վերցնել մի բան, որ պատկանում է մեկ ուրիշի

գովել լավ բաներ ասել ինչ-որ մեկի մասին

դատ երբ մարդիկ փորձում են ապացուցել, որ անձը խախտել է կամ չի խախտել օրենքը

դև Սատանայի անուններից մեկը

երկինք վայր, որտեղ ապրում են Երկնային Հայրը և Հիսուս Քրիստոսը

երկրաշարժ գետնի ուժեղ ցնցում

երկրպագություն փառավորել, սիրել և հնազանդվել Աստծուն

զավթել [զավթած] ուժով վերցնել երկիր կամ անձին

զինվոր մարդ, որը կատարում է թագավորի կամ ղեկավարի հրամանները


գոհաբերություն հրաժարվել մի կարևոր բանից Աստծո կամ այլ մարդկանց համար
գորություն որևէ բան անելու ունակություն: Տես նաև *քահանայություն*

ընդմիջտ միջտ
ընտրել վերցնել հատուկ մի բան

թաղել դնել մահացած մարդու մարմինը գերեզմանի մեջ կամ հողի մեջ; ինչ-որ բան դնել հողի մեջ, թաքցնելու նպատակով

թարգմանել մի լեզվով գրված կամ արտասանված բառերը փոխել մյուս լեզվով, պահպանելով բառի իմաստը

թիկնոց երկար շոր, որ գցվում է հագուստի վրայից



ժողովարան շենք, որտեղ հրեա մարդիկ հավաքվում են Աստծուն երկրպագելու համար

իմաստուն մարդ, որը շատ խելացի է և հասկանում է մարդկանց, օրենքները և սուրբ գրությունները. նաև նա, ով կարողանում է նախորոք պլանավորել
իշխանություն իրավունք օգտագործելու քահանայության գորությունը կամ իրավունք պատժելու նրանց, ովքեր չեն հնազանդվում օրենքին
իջևանատեր իջևանատունը աշխատացնող անձը
իջևանատուն վայր, որտեղ մարդիկ կարող են ուտել և քնել, երբ ճանապարհորդում են


լցված Սուրբ Հոգով երբ Սուրբ Հոգին լցնում է մարդու միտքը և սիրտը ճշմարտությամբ

խաղաբարար անձ, որն օգնում է մարդկանց չբարկանալ միմյանց վրա
խաչել սպանել մարդուն, կախելով նրան փայտից պատրաստած խաչի վրա, ինչպես Հիսուս Քրիստոսին

խեղդվել մահանալ ջրի տակ երկար մնալուց
խոնարհել գլուխը իջեցնել գլուխը որպես հարգանքի նշան



խոստում ասել, որ մի բան կանեք
խորան Հիսուսի ժամանակներում սուրբ սեղան տաճարում: Խորանի վրա մարդիկ գոհաբերություններ էին մատուցում Աստծուն:



խորհրդական անձ, որն օգնում է կամ խորհուրդ է տալիս մեկ ուրիշին
խուլ անկարող լսել

ծաղրել ծիծաղել
ծառա մարդ, որը ծառայում կամ աշխատում է մեկ այլ մարդու կամ Աստծո համար
ծնկի իջնել նստել ծնկների վրա



ծում մնալ առանց ուտելիքի և ջրի Երկնային Հոր օրհնությունները ստանալու համար
ծույլ աշխատել չցանկացող մարդ

կազմակերպել կարգի բերել Հիսուս Քրիստոսի Եկեղեցին

կարգել քահանայության իշխանություն կրող մարդիկ դնում են իրենց ձեռքերը մեկ ուրիշի գլխին և տալիս նրան քահանայության գործություն և իշխանություն



կույր անկարող տեանել

հաղորդություն արարողություն, որի ժամանակ օրհնվում են հացն ու ջուրը և բաժանվում Եկեղեցու անդամներին, որպես հիշեցում Հիսուս Քրիստոսի և պատվիրանները պահելու մասին: Արարողությունը կատարվում է քահանայություն կրող տղամարդկանց կողմից:

հայտնություն այն, ինչ Տերն ասում է Իր զավակներին

հավատալ զգալ, որ ինչ-որ բան ճիշտ է

հավատք հավատալ և վստահել Հիսուս Քրիստոսին

հավերժական կյանք դառնալ մեր Երկնային Հոր նման և միշտ Նրա հետ ապրել

հավիտենական մի բան, որը վերջ չունի; այն տևում է ընդմիշտ

հարկ փող, որը մարդիկ վճարում են կառավարությանը

հարություն առնել մահից հետո մարմնի և հոգու միավորումը


հարսանիք երբ տղամարդը և կինը ամուսնանում են:

հետևել անել մի բան, որն անում է մեկ ուրիշը

հնազանդվել անել այն, ինչ խնդրել կամ պատվիրել են անել

հոգի Երկնային Հոր զավակներից մեկը, ով չունի մահի և ոսկորից մարմին

հովիվ մարդ, որը հոգ է տանում ոչխարների մասին



հրաման ասել որևէ մեկին անել ինչ-որ բան
հրաշք անսովոր մի բան, որը տեղի է ունենաում Աստծո գործության շնորհիվ

ղեկավար մարդ, որը առաջնորդում է մարդկանց մի խումբ և պատասխանատու է այդ խմբի համար
ղեկավարել առաջնորդել ուրիշներին

ճանապարհորդություն գնալ մի տեղից մյուսը
ճաշկերույթ մեծ ճաշ, որը սովորաբար կազմակերպում են հատուկ օր

ճշմարտություն այն, ինչը ճշմարիտ է և ճիշտ


մատնել ընկերոջից հրաժարվել կամ հանձնել նրան թշնամու ձեռքը

մարգարե մարդ, որը կանչվում է Աստծո կողմից, որ մարդկանց ասի, թե ինչ է Աստված ցանկանում, որ նրանք անեն

մարմին մահի և ոսկորից մարմիններ, որ մարդիկ ունեն երկրի վրա, որոնք կազմված են մաշկից, ոսկորներից, մկաններից և արյունից

մեղսագործ մարդ, որը չի հնազանդվում Երկնային Հոր պատվիրաններին

մեղքամոմ մեղոնների պատրաստած մոմե վանդակները: Մեղոնները մոմե այդ վանդակների մեջ մեղր են լցնում:




մեղք չհնազանդվել Երկնային Հոր պատվիրաններին
մետաղադրամ մետաղից փող




մերձավոր մոտ ապրող մի մարդ. Աստծո որևէ այլ գավակ
միանալ խմբի մաս դառնալ
միսիա ծառայության հատուկ ժամանակ, երբ գնում և ուսուցանում են մարդկանց Հիսուս Քրիստոսի ավետարանը և ամրացնում երկրի վրա Աստծո արքայությունը
միսիոներ մարդ, որը գնում է միսիայի. երբեմն այդ անձը պետք է գնա այլ երկիր
մկրտություն [մկրտել] ծես կամ արարողություն, որի ժամանակ Աստծո քահանայության իշխանություն ունեցող անձը մեկ այլ անձին ամբողջովին ընկղմում է ջրի մեջ և հանում դուրս: Մկրտությունը պահանջվում է Հիսուս Քրիստոսի Եկեղեցու անդամ դառնալու համար: Տես նաև *Մուրք Հոգու պարզև*




մորեխ թռչող մեծ միջատ, որը երբեմն օգտագործում են որպես սնունդ



մատր արկղ, որտեղ լցնում են կենդանիների կերը




մարակ բարակ պարան, որն օգտագործվում է որևէ մեկին կամ ինչ-որ բանի խփելու համար



ներել Այլևս չբարկանալ մեկի վրա, ով վատ կամ վնասակար մի բան է արել

որթ բույսի հիմնական ցողունը, օրինակ խաղողի ցողունը, որից աճում են ոլորվող ճյուղները: Որթը խաղողի ճյուղերը կենդանի է պահում:



չարիք մի բան, որը վատն է և չի գալիս Աստծուց

պահակ մարդ, որը հսկում է բանտում գտնվող մարդկանց. հսկել մարդուն, վայրը կամ որևէ իր
պատերազմ ճակատամարտ թշնամիների միջև
պատվիրան այն, ինչ Աստված ասում է մարդկանց անել, որպեսզի նրանք երջանիկ լինեն
պարզև լավ բան, որ Աստված կամ ուրիշները տալիս են մեզ
սար մեծ բլուր
սով ուտելիքի պակաս բերքի քիչ քանակի պատճառով
սուրբ մի բան, որը մաքուր է և նախատեսված Աստծո օգտագործման համար
սուրբ գրություններ գրքեր, որոնք պարունակում են Աստծո խոսքերը, տրված Նրա մարգարեների միջոցով
ստել չասել ճշմարտությունը

սրբազան մի բան, որ տրվել է մեզ Աստծո կողմից, որը պետք է հարգել և որին պետք է պատկառանքով վերաբերվել


վերք մարմնի մաս, որը ցավում է կամ արյունահոսում

վերք մարդու մարմնի վնասվածք

վկայել այլ մարդկանց ասել, որ մենք գիտենք մի բան, որը ճշմարիտ է

վկայություն զգացում կամ միտք, որ գալիս է Սուրբ Հոգուց այն մասին, որ ավետարանը ճշմարիտ է

տաճար Աստծո տունը երկրի վրա. տեղ, որտեղ երկրպագում են Աստծուն. սուրբ վայր, որտեղ սուրբ ծեսեր են կատարվում




տանջվել զգալ մեծ ցավ

տասանորդ փող, որը տալիս են Աստծուն Նրա Եկեղեցին կառուցելու համար

տեսիլք հայտնության տեսակ Երկնային Հորից
տոնել հիշել կարևոր մի օր որևէ հատուկ արարք անելով

փեսացու տղամարդ, որն ամուսնանում է
փշե պսակ շրջանակով հյուսված սուր փշեր, որ դրվեցին Հիսուսի գլխին



փոխակերպվել մարդու փոփոխություն կարճ ժամանակով, ինչը թույլ է տալիս նրան գտնվել Երկնային Հոր ներկայությամբ

փուշ բույսի մաս սուր ծայրով, որին դիպչելիս կարելի է վիրավորվել


փրկել փրկել վտանգից: Հիսուսը մահացավ, որպեսզի փրկեր մեզ ֆիզիկական մահից և մեղքի վտանգներից:

փրկություն փրկվել մեղքից և մահից, որպեսզի կարողանանք կրկին ապրել Երկնային Հոր հետ

քահանա եկեղեցու ղեկավար

քահանայություն Աստծո անունով գործելու իշխանություն

քարանձավ սարի մեջ բացվածք



քարոզ մարդկանց ուղղված խոսք ավետարանի մասին

օրհնել լավ բաներ տալ կամ օգնել մարդուն


օրհներգ եկեղեցական երգ կամ Աստծուն փառաբանող երգ

օրհնություն հատուկ աղոթք, որով խնդրում են Երկնային Հորը մխիթարել կամ բուժել մարդուն; այդ աղոթքն ասող անձը դա անում է քահանայության զորությամբ, որը կրում է: Ցանկացած օգնություն, որը մենք ստանում ենք Աստծուց:

Ծանոթություն վայրերին

(Փակագծերում նշված թիվը գլուխն է, որը պատմում է տվյալ վայրում տեղի ունեցած իրադարձության մասին:)


Քարտեզ 1. Սուրբ Երկիրը Նոր Կտակարանի ժամանակ



1. **Դամասկոս** Պողոսը գնում էր այդ քաղաք, երբ Հիսուսը հայտնվեց նրան և ասաց, որ նա ապաշխարի: (59)
2. **Փիլիպպեա Կեսարիա** Այդ տարածքում Հիսուսը վկայեց Իր մահվան և Հարության մասին, իսկ Պետրոսը վկայեց, որ Հիսուսը Աստծո Որդին է: (32)
3. **Գալիլեա** Հիսուսը շատ ժամանակ անցկացրեց այդ տարածքում, ուսուցանելով ավետարանը և բուժելով հիվանդներին: (19–20, 34, 36)
4. **Կափառնայում** Հիսուսը շատ հրաշքներ գործեց այդ քաղաքում: (23–25, 30)
5. **Գալիլեան ծով** Այդ ծովի մոտ Հիսուսը շատ մարդկանց ուսուցանեց ավետարանը: Հիսուսը հանդարտացրեց փոթորիկը և քայլեց Գալիլեան ծովի վրայով: (18, 21, 29)
6. **Կանա** Հիսուսը այստեղ հարսանիքի ժամանակ ջուրը գինի դարձրեց: Մի մարդ եկավ այստեղ և խնդրեց Հիսուսին բուժել իր հիվանդ որդուն: (12, 16)
7. **Նազարեթ** Հիսուսը մեծացել է այդ քաղաքում: (2, 4, 9, 17)
8. **Սամարիա** Այդ երկրում ջրհորի մոտ Հիսուսը մի կնոջ ուսուցանեց կենդանի ջրի մասին: Հրեաների մեծ մասը ատում էին Սամարացիներին: (15, 58)
9. **Հորդանան գետ** Հովհաննես Մկրտիչը մկրտեց Հիսուս Բրիստոսին այդ գետում: (10)
10. **Յոպպե** Այստեղ է Պետրոսը վերակենդանացրեց Տաբիթային (60)
11. **Երիբով** Բարի Սամարացու մասին առակում մի մարդու, որը ճանապարհորդում էր դեպի այդ քաղաք, համարյա թե սպանել էին: (35)
12. **Երուսաղեմ** Հիսուսը և Նրա Առաքյալները երկար ժամանակ ուսուցանել են այս քաղաքում: Հիսուսը մահացել և հարություն է առել այստեղ: (6, 39–40, 44–57, 63) Տես Քարտեզ 2 Երուսաղեմում տեղի ունեցած այլ պատմությունների համար:
13. **Բեթանիա** Ղազարոսը, որին Հիսուսը վերակենդանացրեց, ապրում էր այստեղ իր քույրեր Մարիամի և Մարթայի հետ: (43)
14. **Բեթլեհեմ** Հիսուս Բրիստոսը այստեղ է ծնվել: (5, 7)

Քարտեզ 2. Երուսաղեմը Հիսուսի ժամանակ

1. **Գազար** Հավանաբար այստեղ է Հիսուս Քրիստոսը մահացել խաչի վրա: (53)
2. **Գերեզմանի Այգի** Հավանաբար, այստեղ է Հիսուս Քրիստոսը թաղվել, հարություն առել և խոսել Մարիամ Մագդաղենացու հետ: (53, 54)
3. **Բեթհեզդայի ջրավազան** Այստեղ Հիսուսը կիրակի օրը մի մարդու բուժեց: (27)
4. **Տաճար** Այստեղ Գաբրիել հրեշտակը Զաքարիային խոսք է տալիս, որ նա որդի կունենա, որը կլինի Հովհաննես Մկրտիչը: Հիսուսը ուսուցանել է այս տաճարում: Նա մարդկանց դուրս հանեց տաճարից, որովհետև նրանք զոհաբերության համար կենդանիներ էին վաճառում: (1, 6, 9, 11, 13, 45, 56)
5. **Գեթսեմանի Այգի** Այս այգում Հիսուս Քրիստոսը աղոթեց, տանջվեց մեր մեղքերի համար, մատնվեց Հուդա Իսկարիովտացու կողմից և ձերբակալվեց: (51, 52)
6. **Չիթենյաց սար** Այստեղ է Հիսուսը ուսուցանել Իր Երկրորդ Գալստի մասին: (46)
7. **Կայիափայի տունը** Հավանաբար, այստեղ հրեա ղեկավարները դատեցին Հիսուսին, մեղադրելով Նրան օրենքը խախտելու մեջ: (52)
8. **Վերնատուն** Մենյակ, որտեղ Հիսուսը ու Նրա Առաքյալները, հավանաբար, ունեցան Զատկի ճաշը: Գեթսեմանի Այգի գնալուց առաջ Հիսուսը Իր Առքյալներին ուսուցանեց հաղորդության մասին: (49, 50)



Ծանոթություն այլ վայրերին

Ամերիկա Իր Հարությունից հետո Հիսուս Քրիստոսը այցելեց Ամերիկայի ժողովրդին և ուսուցանեց նրանց ավետարանը: Նա կանչեց տասներկու աշակերտների, որպեսզի այստեղ ղեկավարեն Եկեղեցին: (40)

Երկիր մոլորակ, որտեղ մենք ապրում ենք: Հիսուս Քրիստոսը պատրաստել է երկիրը մեզ համար: (Ներածություն)

Եգիպտոս երկիր Սուրբ Երկրի հարավում: Հրեշտակը Հովսեփին ասաց, որ նա վերցնեց իր ընտանիքին և գնար Եգիպտոս, որպեսզի Հերովդեսը չսպաներ մանուկ Հիսուսին: (8)

Երկինք վայր, որտեղ ապրում է Երկնային Հայրը: (Ներածություն)

Սուրբ Երկիր երկիր, որտեղ ապրել և ուսուցանել է Հիսուսը: Հրեաստանը, Սամարիան և Գալիլեան գտնվում են Սուրբ Երկրում: (Ներածություն)

Հոմ Հռոմեական Կայսրության մայրաքաղաքը Գոմեթիումը Հոմի բանտում, Պողոսը ուսուցանում էր ավետարանը: (63)

Ծանոթություն մարդկանց

Ագրիպաս Հռոմեական թագավոր, որը կառավարում էր Իսրայելում: Պողոսը Ագրիպասին պատմեց Հիսուս Քրիստոսի մասին:

Անանիա Հիսուս Քրիստոսի աշակերտը, որն ապրում էր Դամասկոսում: Նա օրհնեց Պողոսին և հոգ տարավ նրա մասին, երբ Պողոսը կուրացել էր տեսիլքի ժամանակ:

Աննա հավատարիմ այրի կին, որը տեսավ Հիսուսին, երբ Նա մանուկ էր, և ուսուցանում էր մարդկանց, որ Հիսուսը Աստծո Որդին էր և Քավիչը:

Աստված կարող է վերաբերել Երկնային Հորը կամ Հիսուս Քրիստոսին

Գաբրիել հրեշտակ, որն այցելեց Մարիամին և ասաց նրան, որ նա պետք է լիներ Հիսուսի մայրը: Գաբրիելը այցելել էր նաև Զաքարիային և ասել նրան, որ նա որդի կունենա, որը կլինի Հովհաննես Մկրտիչը:

Եղիա Հին Կտակարանի մարգարե

Եղիսաբեթ Հովհաննես Մկրտչի մայրը

Եսայիա Հին Կտակարանի մարգարե, որը գրել է Հիսուսի մասին

Երկնային Հայր մեր հոգևոր մարմինների Հայրը: Մենք աղոթում ենք Նրան:

Զաքարիա Հովհաննես Մկրտչի հայրը

Կայիափա Հրեա բարձրագույն քահանա, որը մասնակցում էր Հիսուսի դատին և նույնպես մեղադրում էր Նրան

Հակոբոս Հիսուսի Տասներկու Առաքյալներից մեկը: Նա Հիսուսի մահից հետո Պետրոսի խորհրդականներից մեկն էր:

Հայրոս Հրեա ղեկավար Կափառնայում: Հիսուսը վերակենդանացրեց նրա դստերը:

Հերովդես անբարիշտ թագավոր, որը կառավարում էր Երուսաղեմում, երբ ծնվեց Հիսուսը: Նա հրամայեց, որ Բեթլեհեմի բոլոր մանուկներին սպանեին, այդպիսով հույս ունենալով, որ կսպանեին նաև մանուկ Հիսուսին:

Հիսուս Քրիստոս Աստծո Որդի և աշխարհի Փրկիչ: Նա տանջվեց և զոհվեց մեր մեղքերի համար:

Հովհաննես Հիսուսի Տասներկու Առաքյալներից մեկը: Նա Հիսուսի մահից հետո Պետրոսի խորհրդականներից մեկն էր:

Հովհաննես Մկրտիչ մարգարե, որը մկրտեց Հիսուսին: Նա Զաքարիայի և Եղիսաբեթի որդին էր:

Հովսեփ Մարիամի ամուսինը: Հովսեփը հոգ էր տանում Հիսուսի և Մարիամի մասին:

Հուդա Իսկարիովտացի Հիսուսի Առաքյալներից մեկը: Հուդան մատնեց Հիսուսին անբարիշտ մարդկանց 30 արծաթե դրամի դիմաց:

Հռոմեացիներ մարդիկ, որոնք վերահսկում էին այն երկիրը, որտեղ Հիսուսը ապրում էր Իր կյանքի ընթացքում

Հրեաներ Իսրայելցիներ, որոնք Հուդայի թագավորության մասն էին: Հիսուսը հրեա էր:

Ղազարոս մի մարդ, որին Հիսուս կենդանացրեց
Մատաթիա Հիսուսի աշակերտը, որը կանչվեց զբաղեցնելու Հուդա Իսկարիովտացու տեղը որպես Տասներկու Առաքյալներից մեկը
Մարիամ Հիսուսի մայրը
Մարիամ Մագդաղենացի Հիսուսի ընկերը և առաջին անձը, որը տեսավ նրան Հարությունից հետո
Մարիամ և Մարթա Ղազարոսի քույրերը և Հիսուսի մտերիմները
Մեսիա Հիսուս Քրիստոսի անուններից մեկը
Մովսես Հին Կտակարանի մարգարե
Նիկողոեմոս Հրեաների ղեկավար, որը հավատում էր, որ Հիսուսը Փրկիչ էր: Հիսուսը Նիկողոեմոսին սովորեցնում էր մկրտության մասին:
Շիդա միսիոներ և Պողոսի ընկերը
Պետրոս Հիսուսի Տասներկու Առաքյալներից մեկը և Եկեղեցու Նախագահը Հիսուսի մահից հետո
Պողոս մի մարդ, որը չէր սիրում Հիսուսի աշակերտներին, մինչև որ տեսավ Հիսուսին տեսիլքում և դարձի եկավ: Նա հետագայում ծառայեց Աստծուն և դարձավ Առաքյալ: Նա հայտնի էր նաև որպես Սավուղ:
Պոնտացի Պիղատոս Երուսաղեմում Հռոմեացի կառավարիչ: Հրեաները Պիղատոսին ասում էին, որ նա խաչեց Հիսուսին, և Պիղատոսը թույլ տվեց, որ Հիսուսին սպանեին:
Ջոզեֆ Սմիթ Երբ Ջոզեֆ Սմիթը պատանի էր, Երկնային Հայրը և Հիսուս Քրիստոսը այցելեցին նրան: Նրանք ասացին, որ նա չմիանար երկրի վրա ոչ մի եկեղեցու, որովհետև դրանք բոլորը շեղվել էին ճշմարտությունից: Ջոզեֆ Սմիթի միջոցով Հիսուս Քրիստոսի ճշմարիտ Եկեղեցին վերականգնվեց երկրի վրա:

Սամարացիներ մարդկանց մի խումբ, որոնք ապրում էին Հիսուսի երկրում: Հրեաները և Սամարացիները սովորաբար չէին սիրում միմյանց:
Սավուղ տես *Պողոս*
Մատանա Երկնային Հոր հոգևոր զավակներից մեկը: Նա չինագանդվեց Երկնային Հորը և վտարվեց երկնքից: Նա դարձավ դև: Մատանան փորձում է գալթակղել մարդկանց, որ նրանք անեն այն, ինչը սխալ է:
Միմեն արդար մի մարդ, որը տեսավ մանուկ Հիսուսին Երուսաղեմի տաճարում
Միմոն մի մարդ Սամարիայում: Նա փորձեց գնել քահանայություն Պետրոսից և Հովհաննեսից: Նրանք նրան ուսուցանեցին, որ ոչ ոք չի կարող գնել քահանայությունը:
Մուրբ Հոգի Աստվածազլխի երեք անդամներից մեկը: Նա օգնում է Հիսուս Քրիստոսին և Երկնային Հորը: Նա գործություն ունի, որով օգնում է մարդկանց իմանալ ճշմարտությունը: Նա հոգի է և չունի մսից ու ոսկորից մարմին:
Ստեփանոս Հիսուս Քրիստոսի Եկեղեցու արդար ղեկավարներից մեկը: Փարիսեցիները սպանեցին նրան:
Տարիթա բարի կին, որին Պետրոսը վերակենդանացրեց
Փարիսեցիներ Հրեաների ղեկավարները: Նրանցից շատերը ասում էին Հիսուսին և Նրա աշակերտներին:
Փրկիչ Հիսուս Քրիստոսը Փրկիչն է: Նա տանջվեց և մահացավ մեր մեղքերի համար: Նրա շնորհիվ մենք կարող ենք ներվել մեր մեղքերից, եթե ապաշխարենք, և մենք կապրենք հավերժ:

Մուրբ Երկրի լուսանկարներ

(Փակագծերում տրված համարները գլուխների կամ պատմությունների համարներն են, որոնք տեղի են ունեցել նկարած վայրում կամ դրա մոտակայքում:)



Քեթլեհեմ Հիսուս Քրիստոսը ծնվել է այս քաղաքում: (5, 7)



Տաճար Սա Երուսաղեմի տաճարի նմուշն է, որտեղ Հիսուսն ուսուցանեց ավետարանը և որտեղից դուրս հանեց այն մարդկանց, ովքեր զոհաբերությունների համար կենդանիներ էին վաճառում: (1, 6, 9, 11, 13, 45, 56)



Տաճարի աստիճանները Սրանք տաճար տանող իրական աստիճաններն են:



Նազարեթ Հիսուսը մեծացել է այս քաղաքում: (2, 4, 9, 17)



Երուսաղեմ Հիսուսը և Նրա Առաքյալները երկար ժամանակ ուսուցանում էին այս քաղաքում: Հիսուսը մահացավ և հարություն առավ այստեղ: (6, 39–40, 44–57, 63)



Հորդանան գետ Հովհաննես Մկրտիչը մկրտեց Հիսուս Քրիստոսին այս գետում: (10)



Հրեաստանի անապատներ Հիսուս Քրիստոսը ծով պահեց և գայթակղվեց դևի կողմից անապատում Իր մկրտությունից հետո: (11)



Սամարիա Այդ երկրում Հիսուսը ջրհորի մոտի կնոջը ուսուցանեց կենդանի ջրի մասին: Հրեաների մեծ մասը ատում էին Սամարիայի մարդկանց: (15, 58)



Գալիլեա և Գալիլեան ծով Շատ մարդիկ հավատում են, որ այս սարի ստորոտին է Հիսուսը կարդացել Լեռան Քարոզը: Գալիլեյան ծովը ետին պլանում է: Հիսուսը այստեղ ուսուցանեց ավետարանը շատ մարդկանց, ներառյալ Իր Առաքյալներին: Հիսուսը հանդարտեցրեց Գալիլեան Ծովի փոթորիկը: (18–22, 29, 34, 36)



Կափառնայում Այս ավերակները Կափառնայում քաղաքում են: Հիսուսը այս քաղաքում շատ հրաշքներ գործեց: (23–25, 30)



Փիլիպպեա Կեսարիա Այդ վայրում Հիսուսը վկայեց Իր մահվան և Հարության մասին, իսկ Պետրոսը վկայեց այն մասին, որ Հիսուսը Աստծո Որդին է: (32)



Երիքով Բարի Սամարացու մասին առակում, մի մարդ, որը ճանապարհորդում էր դեպի այդ քաղաք, համարյա թե սպանվել էր: (35)



Տաբոր լեռ Հավանաբար, այստեղ տեղի ունեցավ Հիսուս Քրիստոսի Փոխակերպումը: (33)



Գերթեմանի Այգի Այս այգում Հիսուս Քրիստոսը աղոթեց, տանջվեց մեր մեղքերի համար, մատնվեց Հուդա Իսկարիովտացու կողմից և ձերբակալվեց: (51, 52)




Գագար Այստեղ, հավանաբար, Հիսուս Քրիստոսը մահացավ խաչի վրա: (53)



Գերեզմանի այգի Հավանաբար, այստեղ Հիսուս Քրիստոսը թաղվեց, հարություն առավ և խոսեց Մարիամ Մագդաղենացու հետ: (53, 54)

Նոր Կտակարանի ժամանակագիծ

Հիսուսի ծննդից առաջ Մ.թ. 2	Մ.թ. 11	Մ.թ. 31	Մ.թ. 32
<p>1 Եղիսաբեթը և Զաքարիան</p> <p>2 Մարիամը և հրեշտակը</p> <p>3 Ծնվում է Հովհաննես Մկրտիչը</p> <p>4 Հովսեփը և հրեշտակը</p> <hr/> <p>(Մ.թ. 0–2)</p> <p>5 Հիսուս Բրիստոսը ծնվեց</p> <p>6 Տաճար տարվելը</p> <p>7 Իմաստունները</p> <p>8 Չար թագավոր Հերովդեսը</p>	<p>9 Պատանի Հիսուսը</p>	<p>10 Հիսուսը մկրտվում է</p> <p>11 Հիսուսը փորձվում է</p> <p>12 Հարսանիք Կանայում</p> <p>13 Հիսուսը և Նրա Երկնային Հոր Տունը</p> <p>14 Նիկողեմոս</p> <p>15 Կինը ջրհորի մոտ</p> <p>16 Ղեկավարի տղան</p> <p>17 Զայրացած մարդիկ Նազարեթում</p> <p>18 Հիսուսը ընտրում է Իր Առաքյալներին</p> <p>19 Լեռան Բարոզը</p> <p>20 Հիսուսը սովորեցնում է աղոթքի մասին</p> <p>21 Հիսուսը սաստում է քամիներին և ալիքներին</p> <p>22 Չար հոգիներով մարդը</p> <p>23 Մարդ, որը չէր կարողանում քայլել</p>	<p>24 Հայրուսի դուստրը վերակենդանանում է</p> <p>25 Կինը դիպչում է Հիսուսի զգեստին</p> <p>26 Հիսուսը ներում է մի կնոջ</p> <p>27 Կատարում էր Հոր աշխատանքը երկրի վրա</p>



Մ.Թ. 33	Մ.Թ. 34	Փրկչի կյանքի վերջին շաբաթը	Մ.Թ. 34–70
----------------	----------------	-----------------------------------	-------------------

28 Հիսուսը կերակրում է 5,000 մարդ
 29 Հիսուսը քայլում է ջրի վրայով
 30 Կյանքի հացը
 31 Հիսուսը բուժում է խոլ մարդուն
 32 Պետրոսը վկայում է Քրիստոսի մասին
 33 Հայտնություն փառքի մեջ. Փոխակերպում
 34 Չար հոգով տղան
 35 Բարի Սամարացին
 36 Հիսուսը պատմում է երեք առակ
 Կորած ոչխարը
 Կորած դրամը
 Անառակ Որդին
 37 Տաս բորտաները
 38 Փարիսեցին և մաքսավորը
 39 Հիսուսը բուժում է կույրին
 40 Բարի հովիվը
 41 Հիսուսը օրհնում է երեխաներին
 42 Հարուստ երիտասարդը

43 Հիսուսը կենդանացնում է Ղազարոսին

44 Փրկիչը գնում է Երուսաղեմ
 45 Այրի կնոջ լումաները
 46 Երկրորդ Գալուստը
 47 Տաս կույսերը
 48 Տաղանդները
 49 Առաջին Հաղորդությունը
 50 Վերջին Ընթրիքի ժամանակ տրված այլ ուսմունքներ
 51 Հիսուսը տանջվում է Գեթսեմանի Այգում
 52 Հիսուսի դատը
 53 Հիսուսը խաչվում է
 54 Հիսուսը հարություն է առնում

55 Առաքյալները ղեկավարում են Եկեղեցին
 56 Պետրոսը բուժում է մի մարդու
 57 Ամբարիշտները սպանում են Ստեփանոսին
 58 Սիմոնը և Քահանայությունը
 59 Սավուղը սովորում է Հիսուսի մասին
 60 Պետրոսը վերակենդանացնում է Տարիթային
 61 Պողոսը և Շիղան բանտում
 62 Պողոսը հնազանդվում է Սուրբ Հոգուն
 63 Պողոսը ավարտում է իր առաքելությունը





ARMENIAN



4 02366 18201 5
36618 201